

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	7
ԱՄՓՈՓԱԳԻՐ	8
I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	10
II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	
ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	12
1. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ	12
2. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում համաճարակաբանների կողմից ներկայացված ամփոփ հաշվարկի ակտերի վերաբերյալ	15
3. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում պատվաստանյութերի պահպանման համար նախատեսված պայմանների վերաբերյալ.....	17
4. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ծախսված պատվաստանյութերի վերաբերյալ.....	20
5. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11003 միջոցառման շրջանակներում ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում ներկայացված հաշիվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ.....	23
6. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների և արտոնյալ ժամկետների վերաբերյալ	24
7. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող	

վարկերի շրջանակներում վարկառուի և ֆերմերների միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ.....26

8. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում Վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության վերաբերյալ / ձև N 1/.....28

9. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ 31

10. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում Նախարարության և ՖԿ-ների միջև կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման վերաբերյալ32

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԴՈՒՄՆԵՐ37

11. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի կողմի անասնաբուժական վճարովի ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ37

12. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում անասնաբույժների կողմից լրացված գրանցամատյանների վարման վերաբերյալ39

13. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Գավառի տարածաշրջանի անասնաբույժների գրանցամատյանների և ամփոփ-հաշվարկի ակտերի համեմատության վերաբերյալ..... 41

- Նորատուս համայնք 42
- Գավառ համայնքի Հացառատ թաղամաս43
- Գանձակ համայնք.....45

14. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում անասնաբույժների գրանցամատյանների բնօրինակների և ԳԾԿ ներկայացված գրանցամատյանների լուսապատճենների տվյալների համեմատության վերաբերյալ 47

- Նորատուս համայնք 48
- Գավառ համայնքի Հացառատ թաղամաս 48
- Գեղարքունիք համայնք 50
- Հայրավանք համայնք 50
- Նաիրի տարածաշրջանի վերաբերյալ 51

15. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11003 միջոցառման շրջանակներում ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ 52

16. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ 54

17. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ / ձև N 1/ 57

18. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակիցների պարզևատրման վերաբերյալ 59

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 64

19. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման պլանային ցուցանիշների վերաբերյալ 64

20. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ

ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ66

21. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տնտեսվարողներին տրամադրված վարկերի դադարեցման վերաբերյալ.....68

Ծանոթություն69

22. 1022-12001 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր շրջանակներում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ69

23. 1022-12001 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր շրջանակներում վարկառու տնտեսվարողներ սուբյեկտների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ71

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ75

VI. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ77

հիմքը

որոշում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 19-ի թիվ 157-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Հաշվեքննության առարկան

2021 թվականի երեք ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության չափանիշները

1. ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում,
2. ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ հաշվետվություն,
3. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
4. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշում,
5. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք,
6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,
7. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
8. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերի և այլն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2021 թվականի մայիսի 19-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղղեցույցի համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

ստորաբաժանում¹

¹ Տվյալ հաշվեքննություն իրականացրած պաշտոնատար անձինք հաջորդիվ իրականացնելու են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2021 թվականի պետական բյուջեի վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՖԿ** Ֆինանսավորող կառույց՝ առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները:
- ԳՖԿ** Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը:
- ՀԱԲԼԾԿ** «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ:
- ԳԾԿ** «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

ԱՄՓՈՓԱԳԻՐ²

2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության երեք ամիսների բյուջեի կատարողականի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ: Ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար: Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

1116-11001 Գյուղատնտեսական կենդանիների պարվաստման ոլորտում առկա են անհամապատասխանություններ կապված տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի, համաճարակաբանների կողմից ներկայացված ամփոփ հաշվարկի ակտերի, պատվաստանյութերի պահպանման համար նախատեսված պայմանների մասերով, ինչպես նաև առկա են խեղաթյուրումներ կապված անասնաբուժական ծառայությունների ձեռքբերման, անասնաբույժների կողմից գրանցամատյանների վարման հետ:

1116-11003 Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների գծով առկա է անհամապատասխանություն և խեղաթյուրում կապված նմուշառումներ կատարող և լաբորատոր փորձաքննություններ իրականացնող կազմակերպությունների կողմից արդյունքային ցուցանիշների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների հետ:

1022-12004 Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տրոսադրույքների սուբսիդավորում միջոցառման գծով առկա են անհամապատասխանություններ կապված վարկերի մայր գումարների վճարման համար արտոնյալ ժամկետների տրամադրման և կնքված պայմանագրերի դրույթների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված թիվ 1 ձևի կազմման հետ: Առկա են խեղաթյուրումներ վարկառուի կողմից վարկի ստացման համար ֆինանսական կազմակերպությանը ներկայացված ֆերմերների

² Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին որը հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության դեպքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ: Հաշվեքննության օբյեկտի կողմից այն ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտումով: Չնայած դրան սույն ընթացիկ եզրակացությունում արտացոլված են հաշվեքննության յուրաքանչյուր արդյունքի մասով հաշվեքննության օբյեկտի դիրքորոշումը և դրա վերաբերյալ հաշվեքննողների արձագանքները:

հետ կնքված պայմանագրերի ցանկի և կնքված պայմանագրերով փաստացի մթերված քանակների միջև, ինչպես նաև ֆերմերներին պատկանող անասնազվաքանակների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության տարբերությունների մասով:

1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ոլորտում առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից տրված պարզապահարների, ինչպես նաև հսկողության գործընթացի թերացում կապված թափուր հաստիքների հետ:

1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում ոլորտում առկա է անհամապատասխանություն և հսկողական գործընթացի թերացում կապված ծրագրով նախատեսված մոնիթորինգի իրականացման, պարտավորությունների կատարման ինչպես նաև Նախարարության և ՖԿ-ների հետ կնքված պայմանագրերի մասով:

1022-12001 Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ոլորտում առկա են հավաստագրերի մերժման և վարկերի մոնիթորինգի հետ կապված հսկողության գործընթացների թերացումներ:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 1-ից 10-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն միասին վերցված էական են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 11-18-րդ կետում, որը համատարած չեն, սակայն էական է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Գեղամ Հովեյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
— հուլիսի 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2021 թվականի 1-ին եռամսյակ

հազ.դրամ

Ծրագիր		Տարեկան ճշտված պլան	Հաշվետու Ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարման %-ը Ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		32,230,715.90	8,288,425.80	5,893,513.61	4,559,606.39	4,811,436.06	55.01
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	36,864.00	5,652.00	4,884.00	4,884.00	4,884.00	86.41
1022	Գյուղատնտեսության խթանման ծրագիր	6,625,802.60	2,011,168.80	1,774,118.19	1,774,118.19	1,777,603.99	88.21
1026	Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ	165,842.90	29,781.70	2,536.02	2,536.02	8,530.22	8.52
1058	Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,289,829.40	454,706.40	391,955.32	377,881.12	459,469.17	83.10
1059	Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	311,675.30	23,980.00	10,811.80	10,811.80	9,961.95	45.09
1067	Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	30,803.40	6,160.70	3,336.00	3,336.00	3,336.00	54.15
1086	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	3,930,456.60	629,791.80	842,073.16	172,665.63	204,421.36	27.42
1104	Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը	183,120.00	30,581.00	-	-	-	-

1116	Անասնաբուժական ծառայություններ	2,027,594.70	617,584.10	79,745.71	79,745.71	142,453.26	12.91
1134	Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն	1,727,760.30	632,236.90	83,534.44	105,862.28	122,402.28	16.74
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	210,156.20	40,371.80	31,371.80	31,371.80	47,773.42	77.71
1165	Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	1,395,020.00	279,004.00	-	-	5,110.40	-
1187	Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	2,556,248.30	563,422.10	414,610.41	414,610.41	421,510.41	73.59
1190	Զբոսաշրջության զարգացման ծրագիր	7,607,994.90	1,347,737.20	944,791.79	272,038.46	290,640.63	20.18
1224	Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր	3,014,811.10	1,499,511.10	1,282,304.77	1,282,304.77	1,282,304.77	85.51
1230	Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր	116,736.20	116,736.20	27,440.20	27,440.20	31,034.20	23.51

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ

Կրկնվող կետ

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կնքված դրամաշնորհի պայմանագրի 2.4.7. կետի պահանջների հետ՝ «Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան»:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 16-րդ և 17-րդ կետով սահմանված պահանջների մասով՝ գնման առարկան՝ Ծրագրով նախատեսված ծառայությունները, չի ներառվել գնումների պլանում:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշրված պլանով նախատեսվել է հատկացնել 80,893.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,411.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,411.31 հազ. դրամ:

Նախարարության և ԳԾԿ-ի միջև 2021 թվականի հունվարի 26-ին կնքվել է թիվ 17-21 պայմանագիրը՝ (Այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշումը:

Ծրագիրն իրականացվում է երկու բաղադրիչներով՝

1. Կանխարգելիչ, ախտորոշիչ և ախտահանիչ միջոցների, ինչպես նաև անասնաբուժական պարագաների ձեռքբերում,
2. Հակահամաճարակային միջոցառումների իրականացում:

Ծրագրի առաջին բաղադրիչի իրականացման համար Նախարարության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կատարվում է կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցների ձեռքբերում, որը ի պահ է հանձնվում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ ՀԱԲԼԾԿ), հետագայում տրամադրվում է ԳԾԿ-ին՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման երկրորդ բաղադրիչի իրականացման համար:

Պայմանագրով՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» 11001 միջոցառման շրջանակներում, նախատեսվել է տրամադրել մինչև 1,128,794.10 հազ. դրամ: 2021 թվականի ընթացքում հանրապետության բոլոր համայնքներում նախատեսվել է կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ուղղված 8 հիվանդությունների /բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, խլնախտ, սիբիրախտ, դաբադ, խշխշան պալար, հանգուցավոր մաշկաբորբ/ նկատմամբ, իրականացնել 5,303,042 պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի 39 տարածաշրջաններում՝ ԳԾԿ-ի 39 համաճարակաբանների և անասնաբուժական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած 557 անասնաբույժների միջոցով: Ծրագրի ծախսերի նախահաշվով, վերը նշված գումարը նախատեսվել է համաճարակաբանների և անասնաբույժների աշխատավարձերի վճարման համար:

Ծրագրի ծառայությունների մատուցման գործառույթներն իրականացվել են անասնաբույժների և համաճարակաբանների հետ անասնաբուժական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու միջոցով:

2021թ.-ի հունվար ամսվա երկրորդ կեսից սկսած Ծրագրով նախատեսված անասնաբուժական վճարովի ծառայությունների ձեռքբերման նպատակով ԳԾԿ-ի կողմից կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր տարածաշրջանները սպասարկող 39 համաճարակաբանների և համայնքները սպասարկող 557 անասնաբույժների հետ:

Այսպիսով, թվով 39 համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերով ամեն ամիս նախատեսվել է մատուցված ծառայությունների դիմաց յուրաքանչյուրին վճարել 200.00 հազ. դրամ, իսկ 557 անասնաբույժների հետ կնքված պայմանագրերով՝ տարվա ընթացքում իրականացվելիք միջոցառումների քանակը կազմում է 5,460,958 հատ, կամ 5,175,619 պայմանական գլուխ:

Անասնաբույժների համար պայմանագրով սահմանված մեկ միջոցառման իրականացման միավորի արժեքը կազմել է 167 դրամ, իսկ անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է 864,328.44 հազ. դրամ:

Անասնաբույժների և համաճարակաբանների հետ պայմանագրերը կնքվել են առանց մրցույթի կազմակերպման՝ շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև ԳԾԿ-ի գնումների պլանում ներառված չէ տվյալ ծառայությունների ձեռքբերումը: Տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և համայնքները սպասարկող անասնաբույժների հետ առանց մրցույթի պայմանագրի կնքման հետևանքով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է. «Գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում»:

Վերոնշյալ անհամապատասխանությունների առկայությունը հանգեցրել է խեղաթյուրման համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրային գումարների մասով: **Նշված խեղաթյուրումը ներկայացված է ընթացիկ եզրակացության 11-րդ կետում:**

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ձեր կողմից արձանագրված դիտողությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ընդունելի է և այն դարձել է քննարկման առարկա, որի շտկման ուղղությամբ աշխատանքներ են տարվում:

Միաժամանակ հարկ է նշել, որ Ծրագիրն ունի ռազմավարական նշանակություն, քանի որ այն ուղղված է հատուկ վտանգավոր ախտածինների դեմ կանխարգելման և պայքարի միջոցառումների իրականացմանը:

Ուստի, Ծրագրի կարևորությունը որպես առաջնահերթություն հաշվի առնելով և գնահատելով առկա իրավիճակը՝ համայնքներում անասնաբույժ մասնագետների 60-70 %-ի տարիքային շեմը գերազանցում է 60 տարեկանը, անասնաբուժական մասնագիտական մասնավոր կազմակերպությունները բավարար բաշխավաճառություն չեն կարող ապահովել ծրագրի միջոցառումների կատարումն ապահովելու համար, համայնքներում երիտասարդ մասնագետների համար ոլորտը գրավիչ չէ, քանի որ

տվյալ գործունեությունը չի համարվում մասնագիտական ստաժ, ամեն ամիս չեն վարձատրվում, ընդ որում սահմանված միավորի գինն առաջացնում է դժգոհություն, անհրաժեշտություն է առաջացել տարեսկզբին Ծրագիրն իրականացնել տվյալ ձևաչափով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ընդունվել են:

Եզրակացություն

Անասնաբույժների և համաճարակաբանների հետ պայմանագրերը կնքվել են առանց մրցույթի կազմակերպման՝ շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև ԳԾԿ-ի գնումների պլանում ներառված չէ տվյալ ծառայությունների ձեռքբերումը: Տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և համայնքները սպասարկող անասնաբույժների հետ առանց մրցույթի պայմանագրի կնքման հետևանքով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է. «Գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում»:

2. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում համաճարակաբանների կողմից ներկայացված ամփոփ հաշվարկի ակտերի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն համաճարակաբանների հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի 1.2.4 և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի 3.3.7 կետերով սահմանված պահանջների հետ:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 80,893.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,411.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,411.31 հազ. դրամ:

Համաձայն ԳԾԿ-ի կողմից համաճարակաբանների հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի 1.2.4 և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի 3.3.7 կետերի անասնաբուժական միջոցառումների իրականացման վերաբերյալ համայնքը սպասարկող անասնաբույժների կողմից հաշվետվություն է ներկայացվում համաճարակաբանին, իսկ համաճարակաբանը՝ ԳԾԿ յուրաքանչյուր ամիս մինչև հաջորդ ամսվա 1-ը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ փետրվար ամսին համայնքները սպասարկող անասնաբույժների կողմից իրականացվել են կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ, սակայն կատարված միջոցառումների վերաբերյալ համաճարակաբաններին հաշվետվություն չի ներկայացվել: Անասնաբույժների կողմից մարտ ամսին կազմված ակտերում ներառվել են նաև փետրվար ամսվա ընթացքում իրականացված միջոցառումները, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է համաճարակաբանին: Այնուհետև, համաճարակաբանների կողմից կազմված 2021 թվականի մարտ ամսվա ամփոփ հաշվարկի ակտերը ներկայացվել են ԳԾԿ: Ըստ ՀԱԲԼԾԿ-ի կողմից հաշվեքննությանը տրամադրված տեղեկատվության 2021 թվականի հունվար ամսին իրականացվել է բրուցելյոզի 1,663 հատ լաբորատոր հետազոտություն և փետրվար ամսին 10,717 հատ, ընդամենը հունվար-փետրվար ամիսների համար՝ 12,380 հատ: Անասնահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով 12,380 հատ արյան նմուշառման համար անասնաբույժներին վճարվել է 2,067.46 հազ. դրամ/ 12,380*167/: ԳԾԿ-ի կողմից փետրվար ամսին իրականացված ախտորոշիչ միջոցառումները ամփոփվել են 2021 թվականի մարտ ամսին կազմված ամփոփ հաշվարկների ակտում: Ամփոփ հաշվարկի ակտում ներկայացված են նաև փետրվար-մարտ ամիսներին իրականացված կանխարգելիչ միջոցառումները, սակայն դրանց համար առանձնացված հաշվառում վարված չէ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Սույն թվականի փետրվարի 15-24 ընկած ժամանակահատվածում իրականացվել է ՀՀ տարածաշրջաններում առաջին համընդհանուր բաշխումը, որի արդյունքում համաճարակաբանների կողմից պատվաստանյութերի և անասնաբուժական այլ միջոցների ստացումը և տրամադրումը տարածաշրջանային անասնաբույժներին իրականացվել է սույն թվականի փետրվարի 17-25 ընկած ժամանակահատվածում և անասնաբույժներն ընդգրկվել են ինտենսիվ աշխատանքների մեջ՝ ընդհամենը 3-11 օր:

Միաժամանակ հանրապետությունում կայուն անասնահամաճարակային իրավիճակը պահպանելու համար անասնաբույժներին չի հրահանգավորվել ներկայացնել հաշվետվություն՝ իրենց կողմից մի քանի օրվա կատարված միջոցառումների մասին, կարևորելով նրանց ժամանակի խնայումը, քանի որ տարեսկզբի հրամայականն է եղել լիարժեք և պատշաճ միջոցառումների իրականացումը:

Ուստի, մի քանի օրվա կատարված միջոցառումների մասին հաշվետվությունները ներկայացվել են մարտ ամսվա հաշվետվությունների հետ համատեղ: Ինչ վերաբերում է այդ աշխատանքների կատարման տարանջատմանը, այդ մասին գրառումները կատարվում են համապատասխան գրանցամատյաններում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից արձանագրվել է, որ ԳԾԿ-ի, համաճարակաբանների և անասնաբույժների միջև հարաբերությունները կարգավորվում են վերջիններիս կողմից կնքված պայմանագրերով, որտեղ հստակ նշված է կողմերի պարտականությունները: Հետևաբար, հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված արձագանքը չի համապատասխանում պայմանագրերով սահմանված պահանջներին:

Եզրակացություն

Փետրվար ամսին համայնքները սպասարկող անասնաբույժների կողմից իրականացվել են կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ, սակայն կատարված միջոցառումների վերաբերյալ համաճարակաբաններին հաշվետվություն չի ներկայացվել: Անասնաբույժների կողմից մարտ ամսին կազմված ակտերում ներառվել են նաև փետրվար ամսվա ընթացքում իրականացված միջոցառումները, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է համաճարակաբանին: Այնուհետև, համաճարակաբանների կողմից կազմված 2021 թվականի մարտ ամսվա ամփոփ հաշվարկի ակտերը ներկայացվել են ԳԾԿ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

**3. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001
միջոցառման շրջանակներում պատվաստանյութերի
պահպանման համար նախատեսված պայմանների վերաբերյալ**

Կրկնվող կետ

Առկա է անհամապատասխանություն համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված համապատասխան պայմանագրերի՝ 1.2.5 և 3.3.6 կետերով սահմանված պահանջների մասով, քանի որ չունենալով սառնարաններ շաղ հաճախ անասնաբույժներին տրամադրված պարվաստանյութերը անասնաբույժների կողմից պահվում են անձնական օգտագործման սառնարաններում՝ սեփական սննդամթերքի կողքին:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 80,893.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,411.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,411.31 հազ. դրամ:

Համաձայն 2021 թվականի փետրվարի 10-ի ԳԾԿ-ի տնօրենի կողմից հաստատված թիվ 1 բաշխման ցուցակի՝ տարածաշրջանային համաճարակաբանների միջոցով ստորև ներկայացված պատվաստանյութերը, ասեղները և անասնաբուժական գրանցամատյանները 2021 թվականի փետրվարի 15-ին բաշխվել են տարածաշրջանները սպասարկող համաճարակաբաններին:

Աղյուսակ 1

Պատվաստանյութ և այլ պարագաներ	Քանակ
Կենդանիների հակասիբիրախտային պատվաստանյութ, /մլ/	378,150
Խշխշան պալար, /մլ/	85,900
Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութ, /մլ/	887,000
Ասեղներ, /հատ/	452,000
Անասնաբուժական գրանցամատյաններ, /հատ/	937

Համաձայն համաճարակաբանների հետ կնքված վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրի 1.2.5 կետի, համաճարակաբանը պատվաստանյութերը ԳԾԿ-ից ստանում է համապատասխան ջերմային ռեժիմի պահպանման հրահանգով:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 2021 |

Միաժամանակ համաձայն անասնաբույժների հետ կնքված վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրի 3.3.6 կետի՝ անասնաբույժը պարտավոր է պատվաստանյութերը պահել համապատասխան ջերմային պայմաններում և անհրաժեշտ անասնաբուժական դեղամիջոցները օգտագործել միջոցառումների իրականացման համար պահանջվող ժամկետներում:

Հաշվենության ընթացքում ընտրանքային կարգով ուսումնասիրվել են թվով չորս՝ Հրազդան, Նաիրի, Սևան և Գավառ տարածաշրջանների համայնքները սպասարկող անասնաբույժներին հանձնված պատվաստանյութերը համապատասխան ջերմային պայմաններում պահպանելու համար նախատեսված սառնարանների առկայությունը:

Ըստ ԳԾԿ-ի կողմից ներկայացված հաշվապահական տվյալների, չորս տարածաշրջաններում առկա են թվով 44 սառնարան, որը ներկայացվում է ստորև աղյուսակում.

Աղյուսակ 2, հատ

<i>Տարածաշրջան</i>	<i>Համայնքների թիվը</i>	<i>Համայնքները սպասարկող անասնաբույժների թիվը</i>	<i>Ըստ հաշվապահական տվյալների առկա սառնարաններ թիվը</i>	<i>Աշխատող սառնարանների թիվը</i>
Հրազդան	20	10	14	1
Նաիրի	18	11	11	3
Սևան	13	11	11	2
Գավառ	16	13	8	
Ընդամենը	67	45	44	5

Արդյունքում պարզ է դառնում, որ թվով 45 անասնաբույժներից ընդամենը 5 անասնաբույժների մոտ է առկա աշխատող սառնարան:

Հաշվենության օբյեկտի արձագանքը

Արձանագրված փաստը նախարարության և ԳԾԿ-ի համար նույնպես շատ կարևոր է, որի հետ կապված ԳԾԿ-ն դիմել է համապատասխան գերատեսչություն սառնարանային բազան թարմացնելու խնդրանքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սառնարանները բաշխվել են անասնաբույժներին 2007-2009 թվականներին:

Ինչ վերաբերում է պատվաստանյութերի պահպանման ջերմային ռեժիմին, ապա անասնաբույժները՝ պայմանագրի 3.3.6 կետի համաձայն պարտավորվում են

պատվաստանյութերը պահել համապատասխան ջերմային պայմաններում, որի վերաբերյալ խախտումները դեռևս ոչ ԳԾԿ-ի և ոչ էլ հաշվեքննություն իրականացնող մարմնի կողմից չի արձանագրվել:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից արձանագրվել է, որ անասնաբույժների կողմից պատվաստանյութերը պահպանվում են հիմնականում անձնական օգտագործման սառնարաններում, իսկ նշված պահպանման ձևը ընդունելի չէ պատվաստանյութերի հետագա անվնաս օգտագործման համար:

Եզրակացություն

Չորս տարածաշրջաններում իրականացված ոխումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ԳԾԿ-ի կողմից թվով 45 անասնաբույժներին տրամադրված 44 սառնարաններից ընդամենը 5 անասնաբույժների մոտ է առկա աշխատող սառնարան, մյուս անասնաբույժները պատվաստանյութերը պահպանում են անձնական սառնարաններում՝ սննդի հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Նախարարությանը

1116՝ Ծրագրի 11001՝ Միջոցառումն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել անասնաբույժներին համապատասխան սառնարաններով ապահովելու՝ պատվաստանյութերը պատշաճ կերպով և վայրում պահպանելու համար:

4. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ծախսված պատվաստանյութերի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 1.2.6 կետով սահմանված դրույթների մասով, քանի որ նշված փարածաշրջանների համաճարակաբանները հիմնականում չունենին գրանցամատյաններ:

Առկա է անհամապատասխանություն համաճարակաբանների հետ կնքված վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրի 1.2.2 կետի մասով, այն է՝ միջոցառումների իրականացման նպատակով անասնաբուժական դեղամիջոցների և միջոցների տրամադրման ապահովում ըստ ծրագրով նախատեսված պլան-ժամանակացույցերի:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 80,893.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,411.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,411.31 հազ. դրամ:

2021 թվականի փետրվարի 10-ին ԳԾԿ-ի տնօրենի կողմից հաստատված բաշխման ցուցակով թվով 39 համաճարակաբանի բաշխվել է 69,668.38 հազ. դրամի պատվաստանյութ, այդ թվում կենդանիների հակասիբիրախտային պատվաստանյութ՝ 429,100մլ, գումարով 5,777.41 հազ. դրամ, կենդանիների խշխշան պալար՝ 83,500մլ, գումարով՝ 692.21 հազ. դրամ և կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութ՝ 887,000 մլ, գումարով՝ 69,668.38 հազ.դրամ:

Ընտրանքային կարգով թվով չորս տարածաշրջաններում՝ Նաիրի, Հրազդան, Սևան և Գավառ կատարված հաշվեքննությամբ պարզվել է, որ համաճարակաբանները ստացված պատվաստանյութերը անասնաբույժներին են բաշխել ստացումից երեք օր անց՝ մինչև 2021 թվականի փետրվարի 18-ը, որը համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերի 1.2.6 կետի համաձայն պետք է գրանցվեր անասնաբուժական դեղամիջոցների և միջոցների ստացման, ծախսման և մնացորդների վերաբերյալ գրանցամատյանում:

Անասնաբույժներին բաշխված պատվաստանյութերով վերջիններիս կողմից նախատեսված միջոցառումները իրականացվել են մոտ երկու ամիս անց: Համայնքներում պատվաստանյութերի պահպանման համար բավարար քանակի սառնարարներ չեն եղել, կամ շահագործման ենթակա չեն եղել, հետևաբար պատվաստանյութերը անասնաբույժներին պետք է բաշխվեր ըստ անհրաժեշտության՝ միջոցառումներն իրականացնելու նախօրեին:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Տարածաշրջանային թվով 39-ը համաճարակաբան հիմնականում ունեն գրանցամատյաններ, և դրանցում կատարում են գրառումներ պատվաստանյութերի և անասնաբուժական այլ միջոցների հանձնման ու ընդունման վերաբերյալ՝ սահմանված ընթացակարգով: Այդ ամենը ամրագրվում է նաև անասնաբույժների կողմից ներկայացված և տեղական ինքնակառավարման մարմինների կնիքով հաստատված ակտերում:

Միաժամանակ տեղեկացնում են, որ թերությունները շտկելու և բոլոր համաճարակաբաններին միանման գրանցամատյաններ տրամադրելու ուղղությամբ ԳԾԿ-ի նախաձեռնությամբ պատվիրվել են միանման մատյաններ, որոնք համարակալված և կնքված կհանձնվեն համաճարակաբաններին:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից արձանագրվել է, որ նշված տարածաշրջաններում համաճարակաբանների կողմից ստացված պատվաստանյութերը անասնաբույժներին է բաշխվել միանգամից, այն ինչ անհրաժեշտ էր կատարել պարբերաբար, ըստ պլան ժամանակացույցի: Սակայն հաշվեքննության օբյեկտի արձագանքը վերոնշյալ անհամապատասխանությանը չի վերաբերում:

Եզրակացություն

ԳԾԿ-ի կողմից ստացված պատվաստանյութերը համաճարակաբանները անասնաբույժներին են բաշխել ստացումից երեք օր անց՝ մինչև 2021 թվականի փետրվարի 18-ը, որը համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերի 1.2.6 կետի համաձայն պետք է գրանցվեր անասնաբուժական դեղամիջոցների և միջոցների ստացման, ծախսման և մնացորդների վերաբերյալ գրանցամատյանում:

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 1.2.6 կետով սահմանված դրույթների մասով, քանի որ նշված տարածաշրջանների համաճարակաբանները հիմնականում չունեն գրանցամատյաններ:

Անասնաբույժներին բաշխված պատվաստանյութերով վերջիններիս կողմից նախատեսված միջոցառումները իրականացվել են մոտ երկու ամիս անց: **Առկա է անհամապատասխանություն համաճարակաբանների հետ կնքված վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրի 1.2.2 կետի մասով, այն է՝ միջոցառումների իրականացման նպատակով անասնաբուժական դեղամիջոցների և միջոցների տրամադրման ապահովում ըստ ծրագրով նախատեսված պլան-ժամանակացույցերի:**

**5. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11003
միջոցառման շրջանակներում ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից 2021
թվականի առաջին եռամսյակում ներկայացված
հաշիվետվությունների քանակային /արդյունքային/
ցուցանիշների վերաբերյալ**

**Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով
արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-
31.03.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից
ներկայացված հաշիվետվությունների միջև:**

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման
վերաբերյալ ներկայացված հաշիվետվության՝ 1116 Ծրագրի 11003 միջոցառման
շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշիվետվ. ժամանակահատվածի
ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 61,005.50 հազ. դրամ, դրամարկղային
ծախսը կազմել է 30,000.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 53,112.70 հազ. դրամ:

Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային
/կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.03.2021թ.
ժամանակահատվածի համար ներկայացված հաշիվետվության, իրականացվել է
164,849 հատ լաբորատոր փորձաքննություն, որից 161,034 հատ բրուցելյոզի
փորձաքննություն: Բրուցելյոզ հիվանդության կասկածով ՀԱԲԼԾԿ-ի մարզային
ստորաբաժանումներից կենտրոնական լաբորատորիային տրամադրվել են 1,787 հատ
նմուշներ: Արդյունքում պարզ է դառնում, որ 2021 թվականի առաջին եռամսյակի
ընթացքում ըստ ՀԱԲԼԾԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀԱԲԼԾԿ-ին է
տրամադրվել 159,247 հատ /161,034-1,787/ նմուշներ: ԳԾԿ-ի կողմից Ծրագրի
միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ
01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված
հաշիվետվության՝ հաշիվետու ժամանակահատվածում ճշտված պլանով նախատեսվել է
իրականացնել 150,950 հատ բրուցելյոզի նմուշառում, փաստացի կատարվել է 122,742
հատ նմուշառում: Հաշիվետու ժամանակահատվածի փաստացի և պլանային
ցուցանիշների տարբերությունը կազմել է 28,208 հատ, որը կազմակերպության

կողմից պարզաբանվել է, որ պայմանավորված է լաբորատորիաների աշխատանքների ուշ վերսկսմամբ:

Վերոնշյալ անհամապատասխանությունների առկայությունը հանգեցրել է խեղաթյուրման միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների մասով՝ կապված բրուցելյոզ հիվանդության ախտորոշման հետ: **Նշված խեղաթյուրումը ներկայացված է ընթացիկ եզրակացության 15-րդ կետում:**

Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ծրագրի շրջանակներում անասնաբույժի կողմից բրուցելյոզի նկատմամբ արյունառումը դիտարկվում է **մեկ նմուշ**, որի նկատմամբ ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացվում է մի քանի **փորձաքննություններ՝ ազյուրինացիայի ռեակցիա, ՊՇՌ, ԻՖԱ մեթոդներով:**

Հարկ է նշել, որ անասնաբույժի կողմից ներկայացվում է նմուշ, իսկ տվյալ նմուշի նկատմամբ իրականացվում են լաբորատոր փորձաքննությունների վերոգրյալ մեթոդներով:

Հետևաբար, նմուշի և փորձաքննության միջև տարբերությունները առկա կլինեն, որն էլ արտացոլվել է ԳԾԿ-ի կողմից ներկայացված նմուշառուների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների միջև:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված արձագանքը հաշվեքննողների կողմից ընդունելի չէ:

6. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների և արտոնյալ ժամկետների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 24-րդ կետի պահանջների և 16.11.2020թ. վարկառուի ու բանկի կնքված պայմանագրի միջև:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1022 Ծրագրի 12004 միջոցառման շրջանակներում 4522 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 489,909.40 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 489,909.40 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 489,909.40 հազ. դրամ:

«Սպայկա» ՍՊԸ-ն 2020 թվականի նոյեմբերի 16-ին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ կնքել է վարկ տրամադրելու մասին լրացուցիչ համաձայնագիր 100,000.00 հազ. դրամի գումար երկու փուլով տրամադրելու վերաբերյալ, երկու տարի ժամկետով: Պայմանագրի 1.3. կետի պահանջների համաձայն վարկը վարկառուին տրամադրվում է փուլային, առաջին փուլով տրամադրվել է 50,000.00 հազ.դրամ 13.15 տոկոս տոկոսադրույքով 24 ամիս ժամկետով, իսկ երկրորդ փուլով՝ 04.02.2021թ. տրամադրվել է ևս 50,000.00 հազ.դրամ, ընդ որում 12 տոկոս տոկոսադրույքով և 12 ամիս ժամկետով: Վարկառուի և բանկի միջև 16.11.2020թ. կնքված պայմանագրի վարկի և տոկոսների մարման ժամանակացույցի համաձայն վարկի մայր գումարի վճարման համար սահմանվել է 6 ամիս արտոնյալ ժամկետ:

ՀՀ կառավարության որոշման 24-րդ կետի համաձայն վարկերը տրամադրվում են առավելագույնը մեկ տարի մարման ժամկետով, առավելագույնը տարեկան 12 տոկոս անվանական տոկոսադրույքով: Վարկի մայր գումարի վճարման համար արտոնյալ ժամկետը պետք է սահմանվի վարկը տրամադրելու պահից հաշվարկելով առնվազն 2 ամիս, բայց ոչ ավելին քան 3 ամիս:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Վարկառուի և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև 2020 թվականի նոյեմբերի 16-ին կնքված երկու տարի ժամկետով վարկ տրամադրելու մասին լրացուցիչ 100,000.00 հազ. դրամի գումար երկու փուլով տրամադրելու մասին համաձայնագրի վերաբերյալ հայտնում են, որ համաձայնագրի կնքման օրվա դրությամբ վարկերը տրամադրվել են Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 356-Լ որոշումով հաստատված Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, որով տրամադրված վարկերի մարման ժամկետը սահմանվել է մինչև 1.5 տարի, իսկ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ 2-ից 3 ամիս, մինչդեռ վարկերն առաջին փուլով տրամադրվել է 2 տարի մարման ժամկետով, որը Ծրագրի

պայմանների խախտում է: Այդ առումով հարկ եմ համարում նշել, որ այդ խախտումը նկատվել է Էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ԷՆ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի Գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից ներկայացված հաշվետվություններից, որի մասին ՖԿ-ին աշխատանքային կարգով տեղեկացվել է վարկային պայմանագրում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու մասին: ԳՖԿ-ի հաջորդ հաշվետվություններում պայմանագրի ժամկետը նշված է եղել 1.5 տարի:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ընդունվել են:

Եզրակացություն

Վարկի մայր գումարի վճարման համար արտոնյալ ժամկետը պետք է սահմանվի վարկը տրամադրելու պահից հաշվարկելով առնվազն 2 ամիս, բայց ոչ ավելին քան 3 ամիս: Սակայն արտոնյալ ժամկետ է սահմանվել 6 ամիս: **Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 24-րդ կետի պահանջների և 16.11.2020թ. վարկառուի ու բանկի կնքված պայմանագրի միջև:**

7. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում վարկառուի և ֆերմերների միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և կողմերի /վարկառուի ու ֆերմերների / կնքված պայմանագրերի միջև:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1022 Ծրագրի 12004 միջոցառման շրջանակներում 4522 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշրված պլանով նախատեսվել է հատկացնել 489,909.40 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 489,909.40 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 489,909.40 հազ. դրամ:

«Սպայկա» ՍՊԸ-ի կողմից պայմանագրեր են կնքվել թվով 17 ֆերմերի հետ, 5 ամիս ժամկետով, սակայն հաշվաքննության ընթացքում տրամադրվել է 16 պայմանագիր: Համաձայն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշման 23-րդ կետի 2-րդ մասի, կնքված պայմանագրերը պետք է ներառեն հետևյալ դրույթները՝

- գյուղացիական տնտեսությանը սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալական հիմունքներով օգտագործվող հողատարածքի (հողատարածքների) չափը, կամ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, կամ վաճառվող գյուղատնտեսական կենդանիների տեսակը և գլխաքանակը կամ շինշիլայի գլխաքանակը,
- հումքի գնման քանակը, ժամկետները և գնման փաստացի կամ նվազագույն գինը, ըստ առանձին սորտերի կամ տեսակների,
- հումքի արժեքի վճարման կարգը և ժամկետները,
- կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը,
- անհաղթահարելի ուժի ազդեցությունը,
- պայմանագրի գործողության ժամկետը և դադարման հիմքերը,
- վաճառողի բանկային հաշվի համարը: Հումքի գնման պայմանագրում վաճառողի բանկային հաշվի համարը նշված չլինելու դեպքում վարկառուն պետք է ՖԿ-ին որևէ այլ եղանակով տրամադրի վաճառողի բանկային հաշվի համարը,
- գյուղացիական տնտեսությանը հումքի արտադրության համար անհրաժեշտ կանխավճարի տրամադրման մասին (ըստ անհրաժեշտության)։

Ուսումնասիրելով կնքված պայմանագրերի դրույթները պարզվել է, որ պայմանագրերը կնքվել են թերություններով, մասնավորապես՝ պայմանագրերում նշված չէ գյուղացիական տնտեսությանը սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալական հիմունքներով օգտագործվող հողատարածքի (հողատարածքների) չափը, կամ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, կամ վաճառվող գյուղատնտեսական կենդանիների տեսակը և գլխաքանակը և պայմանագրի գործողության ընթացքում հումքի գնման քանակը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Պայմանագրի դրույթները վերաբերվում են վարկերի տրամադրման բոլոր ուղղություններին, իսկ կաթի մթերման դեպքում՝ պայմանագրում պետք է ներառվեր միայն տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը:

Ծրագրի 28-րդ կետի 3-րդ կետով նախատեսվում է, որ ՖԿ-ն Էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում պտուղբանջարեղենի, խաղողի կամ կաթի գնման նպատակով տրամադրվող վարկի հաստատումից հետո հումքի գնման պայմանագրերում փոփոխություններ կատարվելու դեպքում այդ մասին տեղեկատվություն՝ N 1 ձևին համապատասխան:

Էկոնոմիկայի նախարարություն փոփոխված Ձև 1 չի ներկայացվել: Անհամապատասխանությունը կարող էր բացահայտվել ՖԿ-ի կողմից՝ շահառուի կողմից ՖԿ-ին ներկայացված վճարման փաստաթղթի և Ձև 1 համադրության արդյունքում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ընդունվել են:

Եզրակացություն

Կնքված պայմանագրերի դրույթները չեն համապատասխանում ՀՀ կառավարության որոշմամբ դրույթների: **Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-L որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ մասի պահանջների և կողմերի /վարկառուի ու ֆերմերների / կնքված պայմանագրերի միջև:**

8. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում Վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության վերաբերյալ / ձև N 1/

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-L որոշմամբ հաստատված ծրագրի 28-րդ կետի պահանջների միջև:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1022 Ծրագրի 12004 միջոցառման շրջանակներում 4522 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 489,909.40 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 489,909.40 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 489,909.40 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշման 28-րդ կետի համաձայն ֆինանսական կազմակերպությունը /բանկը կամ վարկային կազմակերպությունը/ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության secretariat@mineconomy.am էլեկտրոնային փոստին ներկայացնում է՝

1) վարկային հայտի ստացման օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկատվություն՝ ներառելով հետևյալ տվյալները՝ վարկառուի անվանումը, վարկի գումարը և վարկի շրջանակներում նախատեսվող հումքի գնումների ծավալը (ընդամենը պտուղ, բանջարեղեն, խաղող, կաթ, շինշիլա կամ գյուղատնտեսական կենդանի):

2) պտուղբանջարեղենի, խաղողի, կաթի կամ շինշիլայի գնման նպատակով տրամադրվող վարկի հաստատման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկատվություն՝ համաձայն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշման N 1 ձևի, որում պետք է ներառված լինի հետևյալ տեղեկատվությունը տրամադրված վարկի շրջանակներում կնքված հումքի գնման պայմանագրերի մասին՝

- անվանումը կամ անունը, ազգանունը հեռախոսահամարը
- մշակվող հողատարածքի, ֆերմայի կամ կաթի մթերման կետի տեղակայումը՝ մարզ, համայնք, տարածք,
- պայմանագրի շրջանակներում վաճառվող հումքի՝ տեսակը և քանակը:

Ուսումնասիրելով հաշվեքննության ընթացքում տրամադրված N 1 ձևերը, պարզվել է որ դրանք կազմված են թերություններով, մասնավորապես՝ նշված չեն մշակվող հողատարածքը, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը: Սակայն վարկառու կազմակերպության կողմից հաշվեքննության ընթացքում տրամադրվել է տրամադրված վարկի շրջանակներում կնքված հումքի գնման պայմանագրերի մասին մեկ այլ տեղեկատվություն որում ներկայացված է վերոգրյալ վարկի շրջանակներում ֆերմերներին պատկանող կովերի գլխաքանակը:

Նշենք նաև, որ մթերված կաթի համար վճարումները իրականացվում են վարկառուի և ֆերմերի միջև կնքված գնման ակտի հիման վրա, որը պետք է համապատասխանի ձև N 1-ով ներկայացված քանակներին: Բացի այդ, ուսումնասիրելով նաև գնման ակտերը և համապատասխան վճարման հանձնարարագրերը, պարզվել է, որ իրականացված որոշ վճարումների համար

գնման ակտեր հաշվեքննությանը չեն ներկայացվել, կամ տեղի է ունեցել հակառակը, առկա է գնման ակտերը, սակայն 01.04.2021թ դրությամբ բացակայում են վճարման հանձնարարագրերը՝ մասնավորապես

Աղյուսակ 3, հազ.դրամ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Գնման ակտ			Վճարման հանձնարարագիր	
		Ամսաթիվ	Քանակ /լ/	Գումար	Ամսաթիվ	Գումար
1	Ջ. Մ.				30.12.2020	398.90
2	Ա. Ի.	08.03.2021	2522	529.70	30.12.2020	404.60
3	Ս. Ս.	08.03.2021	4193	836.90		
4	Հ. Հ.	08.03.2021	1301	274.20	30.12.2020	132.10
5	Դ.Ա.	23.11.2020	995	211.60		
		08.03.2021	12890	1,933.60		
6	Ս.Գ.	08.03.2021	3564	736.00	30.12.2020	265.50
7	Փ. Պ.	08.03.2021	2694	556.30	30.12.2020	340.70
8	Ն. Վ.	08.03.2021	7252	1,473.40		
9	Բ. Ա.	22.02.2021	6517	1,246.10		

Արդյունքում կազմված N 1 ձևերը և ֆերմերների հետ կնքված պայամանագրերը կնքվել են թերություններով, այն է՝ չեն նշվել գյուղացիական տնտեսությանը սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալական հիմունքներով օգտագործվող հողատարածքի (հողատարածքների) չափը, տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը: Պարզ չէ նաև, թե ինչպես է ձևավորվել հումքի գնման քանակը ձև N 1-ում պայամանագրային գումարների հաշվարկման ժամանակ և ինչ հիմքերով է հաշվարկվել տրամադրված վարկերի գումարները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի կողմից ըստ էության արձագանք չի ներկայացվել:

Եզրակացություն

Կառավարության որոշմամբ սահմանված N 1 ձևերը շահառուի կողմից կազմված են թերություններով, մասնավորապես՝ նշված չեն մշակվող հողատարածքը,

գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը: **Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 28-րդ կետի պահանջների միջև:**

9. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով:

ՀՀ պետական բյուջեից Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշգրիտ պլանով նախատեսվել է հատկացնել 2,175,300.00 հազ. դրամ: 2020 թվականի երեք ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 631,160.55 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 631,160.55 հազ. դրամ:

Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով: Ծրագիրն կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի միջոցով.

- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 31-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին, երկրորդ եվ երրորդ միջոցառումների շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգերը հաստատելու մասին» (այսուհետ՝ Կարգ) թիվ N 416-Լ որոշմամբ,
- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին» (այսուհետ՝ Որոշում) թիվ N 355-Լ որոշմամբ,

- Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և առևտրային բանկերի կամ վարկայանի կազմակերպությունների (այս գլխում այսուհետ՝ Ֆինանսական կառույց) միջև կնքված պայմանագիր (այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր):

Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի համաձայն՝ միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության որևէ ստորաբաժանում լիազորված չէ մոնիթորինգն իրականացնելու համար, ինչպես նաև չի հաստատվել մոնիթորինգ իրականացնելու որևէ կարգ: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականացվել մոնիթորինգ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարության կողմից ստեղծվել է մոնիթորինգային գործառույթներ իրականացնող հանձնաժողով, որի գործառույթների մեջ ներկայումս նաև 1-ին միջոցառման մոնիթորինգի իրականացումն է:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունն ընդունվել է:

Եզրակացություն

Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի համաձայն՝ միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականացվել մոնիթորինգ: **Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով:**

10. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի

**տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում
Նախարարության և ՖԿ-ների միջև կնքված պայմանագրերով
նախատեսված պարտավորությունների կատարման վերաբերյալ**

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 8.2 կետով սահմանված պահանջների մասով:

ՀՀ պետական բյուջեից Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշգրիտ պլանով նախատեսվել է հատկացնել 2,175,300.00 հազ. դրամ: 2020 թվականի երեք ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 631,160.55 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 631,160.55 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում Նախարարությունը հաշվեքննողներին է տրամադրել հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածի Ծրագրի գանձապետական հաշվի քաղվածքը, ինչպես նաև Նախարարության և առևտրային բանկերի կամ վարկայանի կազմակերպությունների (այս գլխում այսուհետ՝ Ֆինանսական կառույց) միջև կնքված պայմանագրի 5.2 կետով (այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված՝ Ֆինանսական կառույցների հայտերը և Պայմանագրի 8.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված Ֆինանսական կառույցների հաշվետվությունները:

Հաշվեքննողների կողմից ուսումնասիրվել և համադրվել են Ֆինանսական կառույցների կողմից ներկայացված 2021 թվականի հունվար-մարտ հաշվետու ամիսներն ընդգրկող հայտերը և հաշվետվությունները: Ինչպես նաև 2020 թվականի դեկտեմբեր ամսվա համար 2021 թվականի հունվար ամսին ներկայացված հայտերը, որի վճարումները ըստ Պայմանագրի իրականացվում են հայտերը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Այսպիսով հաշվեքննողների կողմից փաստացի ուսումնասիրվել են 2020 թվականի դեկտեմբեր, 2021 թվականի հունվար-փետրվար ամիսների հայտերը, որոնց մասով Նախարարության կողմից կատարված վճարումները ներառում են հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածը:

Պայմանագրի 8.2 կետով սահմանվում է, որ Ֆինանսավորողը պարտավոր է ՖԿ-ի կողմից ներկայացված Հայտի ներկայացման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում ՖԿ-ին փոխանցել սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարը, եթե հայտը բավարարում է պահանջներին: Սակայն ստորև աղյուսակում ներկայացված է

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 2021 |

Նախարարության կողմից կատարված վճարումները, որից պարզ է դառնում, որ Նախարարությունը ամբողջությամբ չի կատարել պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: ***Այսպիսով, առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 8.2 կետով սահմանված պահանջների մասով:***

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարության կողմից թերակատարումը պայմանավորված է բյուջեում միջոցների բացակայության հետ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունն ընդունվել է:

Եզրակացություն

Պայմանագրի 8.2 կետով սահմանվում է, որ Ֆինանսավորողը պարտավոր է ՖԿ-ի կողմից ներկայացված Հայտի ներկայացման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում ՖԿ-ին փոխանցել սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարը, եթե Հայտը բավարարում է պահանջներին: ***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 8.2 կետով սահմանված պահանջների մասով:***

Աղյուսակ 4, հազ.դրամ

Ֆինանսական կառույց	Հայտ				Նախարարության կողմից ֆինանսական պարտավորությունների մարում			
	2020 թվականի դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Ընդամենը	2020 թվականի դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Ընդամենը
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	8,766,856.00	8,575,930.20	7,399,381.90	24,742,168.10	8,766,856.00	8,575,931.00	-	17,342,787.00
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ	26,167,650.00	31,140,925.00	29,727,143.00	87,035,718.00	26,167,650.00	-	-	26,167,650.00
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	42,020,002.00	42,803,121.00	40,103,921.61	124,927,044.61	42,020,002.00	-	-	42,020,002.00
«Ամերիաբանկ» ՓԲԸ	145,125,346.00	150,186,081.70	135,121,876.00	430,433,303.70	145,125,346.00	-	-	145,125,346.00
«Արարատբանկ» ԲԲԸ	39,490,638.00	37,224,949.40	37,363,750.70	114,079,338.10	39,490,638.00	37,224,950.00	-	76,715,588.00
«Արդշինբանկ» ՓԲԸ	14,088,008.00	14,367,624.50	13,616,516.50	42,072,149.00	14,088,008.00	14,367,625.00	-	28,455,633.00
«Արմավիսբանկ» ՓԲԸ	24,783,231.00	24,087,328.78	23,018,410.02	71,888,969.80	24,783,231.00	-	-	24,783,231.00
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ		7,129,678.50	6,324,248.90	13,453,927.40		7,129,679.00	-	7,129,679.00
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	7,169,693.00	6,623,419.60	5,897,641.80	19,690,754.40	7,169,693.00	6,623,420.00	-	13,793,113.00
«Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա ՈՒՎԿ» ՓԲԸ	3,496,804.00	3,952,393.50	3,815,148.80	11,264,346.30	3,496,804.00	3,952,394.00	-	7,449,198.00
«Էվոկաբանկ» ՓԲԸ	2,925,258.00	2,556,074.70	2,492,356.70	7,973,689.40	2,925,258.00	2,556,075.00	-	5,481,333.00

«ԷՅՁ-ԷՍ-ԲԻՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ	50,286,377.00	62,951,122.69	64,248,444.53	177,485,944.22	50,286,377.00	-	-	50,286,377.00
«Այդի Բանկ» ՓԲԸ	50,707,865.00	58,076,554.00	61,426,774.80	170,211,193.80	50,707,865.00	-	-	50,707,865.00
«Ինեկոբանկ» ՓԲԸ	125,347,450.00	135,021,063.60	132,529,447.90	392,897,961.50	125,347,450.00	-	-	125,347,450.00
«Կամուրջ ՈՒՎԿ» ՓԲԸ	25,364.00	24,372.10	20,093.00	69,829.10	25,364.00	24,373.00	-	49,737.00
«Յոնիբանկ» ԲԲԸ	4,997,335.00	4,949,536.00	4,421,872.00	14,368,743.00	4,997,335.00	4,949,536.00	-	9,946,871.00
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	195,837.00	162,854.40	148,026.30	506,717.70	195,837.00	162,855.00	-	358,692.00
ԸՆԴԱՄԵՆԸ				1,703,101,798.13				631,160,552.00

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

11. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի կողմի անասնաբուժական վճարովի ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում կապված համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի մասով: Նրանց հետ կնքվել են պայմանագրեր շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, գումարային արտահայտմամբ անասնաբույժների հետ կնքվել է 864,328.44 հազ. դրամ և համաճարակաբանների հետ ամսական կտրվածքով 200.00 հազ. դրամի պայմանագրեր:

Ընթացիկ եզրակացության առաջին կետում արձանագրվել են անհամապատասխանություններ, կապված անասնահամաճարակային ծառայությունների ձեռքբերման հետ: Նշված ծառայությունների ձեռքբերումը իրականացվել է շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, հետևաբար նշված անհամապատասխանությունների առկայությունը հանգեցրել է խեղաթյուրման համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրային գումարների մասով. համաճարակաբանների հետ՝ ամսական 200.00 հազ. դրամի չափով, /առաջին եռամսյակի ընթացքում ԳԾԿ-ի կողմից համաճարակաբաններին հաշվարկվել է 16,995.13 հազ. դրամ աշխատավարձ/ և անասնաբույժների հետ տարեկան կտրվածքով՝ 864,328.44 հազ. դրամի չափով: ԳԾԿ-ի կողմից Նախարարություն ներկայացված «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» Ծրագրի իրականացման ծախսերի կատարման հայտին կից ներկայացված հաշվարկ-բացատրագրում 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված 11,141.30 հազ. դրամի ծախսը ներկայացվել է որպես «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /տնտեսագիտական դասակարգմամբ- 4111 հոդված/, ինչը Պայմանագրով նախատեսված է 4241 «Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական հոդվածի ներքո:

Հաշվերենության օբյեկտի արձագանքը

Ձեր կողմից արձանագրված դիտողությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ընդունելի է և այն դարձել է քննարկման առարկա, որի շտկման ուղղությամբ աշխատանքներ են տարվում:

Միաժամանակ հարկ է նշել, որ Ծրագիրն ունի ռազմավարական նշանակություն, քանի որ այն ուղղված է հատուկ վտանգավոր ախտածինների դեմ կանխարգելման և պայքարի միջոցառումների իրականացմանը:

Ուստի, Ծրագրի կարևորությունը որպես առաջնահերթություն հաշվի առնելով և գնահատելով առկա իրավիճակը՝ համայնքներում անասնաբույժ մասնագետների 60-70 %-ի տարիքային շեմը գերազանցում է 60 տարեկանը, անասնաբուժական մասնագիտական մասնավոր կազմակերպությունները բավարար բաշխավաճություն չեն կարող ապահովել ծրագրի միջոցառումների կատարումն ապահովելու համար, համայնքներում երիտասարդ մասնագետների համար ոլորտը գրավիչ չէ, քանի որ տվյալ գործունեությունը չի համարվում մասնագիտական ստաժ, ամեն ամիս չեն վարձատրվում, ընդ որում սահմանված միավորի գինն առաջացնում է դժգոհություն, անհրաժեշտություն է առաջացել տարեսկզբին Ծրագիրն իրականացնել տվյալ ձևաչափով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ընդունվել են:

Եզրակացություն

Ծրագրի շրջանակներում ԳԾԿ-ի կողմից անասնահամաճարակային ծառայությունների ձեռքբերումը իրականացվել է առանց մրցույթի, շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, հետևաբար նշված անհամապատասխանությունների առկայությունը հանգեցրել է խեղաթյուրման համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրային գումարների մասով՝ համաճարակաբանների հետ՝ ամսական 200.00 հազ, դրամի չափով, /առաջին եռամսյակի ընթացքում ԳԾԿ-ի կողմից համաճարակաբաններին հաշվարկվել է 16,995.13 հազ. դրամ աշխատավարձ/ և անասնաբույժների հետ տարեկան կտրվածքով՝ 864,328.44 հազ. դրամի չափով:

12. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում անասնաբույժների կողմից լրացված գրանցամատյանների վարման վերաբերյալ

***Առկա է խեղաթյուրում երեք ամիսների համար անասնաբույժներին
վճարված աշխատավարձի ամբողջ չափով, ընդհանուր գումարով՝ 113,460.84
հազ. դրամ:***

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների
կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001
միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետվու
ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 80,893.30 հազ.
դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,411.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝
11,411.31 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ընտրանքային կարգով ուսումնասիրվել է
Նաիրիի, Հրազդանի, Սևանի և Գավառի տարածաշրջաններում
համաճարակաբանների և համայնքները սպասարկող անասնաբույժների կողմից
իրականացված անասնաբուժահամաճարակային միջոցառումները:
Մասնավորապես՝ ուսումնասիրվել են անասնաբույժների կողմից լրացման ենթակա
գրանցամատյանները: Համաձայն անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի
3.3.8 կետի անասնաբույժը պարտավոր է վարել անասնաբուժական
դեղամիջոցների ստացման, ծախսման, մնացորդների և կատարված
միջոցառումների վերաբերյալ գրանցամատյան: Գրանցամատյանում առկա է
առանձին սյունակ՝ անասնատիրոջ անվան դիմաց կատարվելիք ստորագրության
համար: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ անասնաբույժների
գրանցամատյաններում, որոշ դեպքերում, տվյալ սյունակում միջոցառումների
կատարումն հավաստող անասնատիրոջ ստորագրության փոխարեն, ըստ՝
անասնաբույժի մեկնաբանության, ստորագրել են անասնաբույժները, տան
անդամներից որևէ մեկը, կամ անասնաբույժին օգնող բանվորը: Առկա է
անհամապատասխանություն անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի 3.3.8
կետով սահմանված պահանջների մասով: **Հաշվի առնելով նշված հսկողության
գործընթացի համատարած բացակայությունը, այն է՝ անասնատիրոջ**

ստորագրության բացակայությունը, նշվածը հանգեցնում է անասնաբուժական ծառայությունների խեղաթյուրմանը՝ նշված անասնաբույժներին վճարված աշխատավարձի ամբողջ գումարի չափով՝ 113,460.84 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ելնելով անասնաբուժական միջոցառումների առանձնահատկությունից, ամենամսյա հաշվետվության հետ միասին ԳԾԿ է ներկայացվում յուրաքանչյուր անասնաբույժի աշխատանքային անասնաբուժական գրանցամատյանի լուսապատճենը, որի արդյունքում անասնաբույժ մասնագետները ստուգում են գրանցամատյաններում ստորագրությունների առկայությունը, որը զետեղված է համապատասխան սյունակում և գրառումները համեմատում են անասնաբույժների կողմից ներկայացված հաշվետվությունների հետ: Վերջինիս արդյունքում ԳԾԿ-ի անասնաբույժ մասնագետներն ստուգման ընթացքում տեսնում են անասնատերերը ստորագրություններ գրանցամատյանի համապատասխան սյունակում:

Ինչ վերաբերում է Ծրագրով և պայմանագրով նախատեսված օգնող բանվոր չլինելու խնդրին, ապա հարկ է նշել, որ երբեմն օգնող բանվոր է հանդիսանում անասնատիրոջ ընտանիքի անդամներից որևէ մեկը կամ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված լիազոր անձը, և նա էլ ստորագրում է գրանցամատյանի համապատասխան սյունակում՝ հաստատելով կատարված աշխատանքը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված արձագանքը հաշվեքննողների կողմից ընդունելի չէ:

Եզրակացություն

Անասնաբույժների գրանցամատյաններում, որոշ դեպքերում, տվյալ սյունակում միջոցառումների կատարումն հավաստող անասնատիրոջ ստորագրության փոխարեն, ըստ՝ անասնաբույժի մեկնաբանության, ստորագրել են անասնաբույժները, տան անդամներից որևէ մեկը, կամ անասնաբույժին օգնող բանվորը: Առկա է անհամապատասխանություն անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի 3.3.8 կետով սահմանված պահանջների մասով: **Հաշվի առնելով նշված հսկողության գործընթացի համատարած բացակայությունը, այն է անասնատիրոջ ստորագրության բացակայությունը, նշվածը հանգեցնում է անասնաբուժական ծառայությունների խեղաթյուրմանը՝ նշված անասնաբույժներին վճարված աշխատավարձի ամբողջ գումարի չափով՝ 113,460.84 հազ.դրամ:**

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

ԳԾԿ-ին

Առաջարկվում է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույթը՝ գրանցամատյաններում գրանցումներ կատարելու վերաբերյալ, մասնավորապես անասնատատիրոջ կողմից ստորագրելու պահանջը՝ սահմանել որպես պարտադիր պայման:

13. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Գավառի տարածաշրջանի անասնաբույժների գրանցամատյանների և ամփոփ-հաշվարկի ակտերի համեմատության վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում անասնաբույժների կողմից իրականացված հականասնահամաճարակային միջոցառումների իրականացման մասով: Հայտնաբերվել են համադարձ շեղումներ գրանցամատյանում ներկայացված տվյալների, անասնաբույժների կողմից կազմված ակտերի և փաստացի հաշվարկված պատվաստանյութի քանակների հետ, ինչը հանգեցնում է անասնաբույժների կողմից ծախսված պատվաստանյութերի ամբողջ գումարի, ինչպես նաև անասնաբույժներին վճարված աշխատավարձի ծախսի խեղաթյուրման հետ, որը 2021 թվականի 1-ին եռամսյակում համապատասխանաբար կազմում է 73,284.58 հազ.դրամ և 113,460.84 հազ.դրամ:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կտրաման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 80,893.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,411.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,411.31 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում անասնաբույժների կողմից վարվող հականասնահամաճարակային միջոցառումների գրանցամատյանում գրանցված միջոցառումների քանակները համեմատվել են անասնաբույժների կողմից կազմված

ակտով արձանագրված միջոցառումների, անասնազխաքանակի և ծախսված պատվաստանյութերի քանակների հետ: Հաշվեքննության ընթացքում հայտնաբերվել են համատարած շեղումներ գրանցամատյանում ներկայացված տվյալների, անասնաբույժների կողմից կազմված ակտերի և փաստացի հաշվարկված պատվաստանյութի քանակների հետ, ինչը հանգեցնում է անասնաբույժների կողմից ծախսված պատվաստանյութերի ամբողջ գումարի, ինչպես նաև անասնաբույժներին վճարված աշխատավարձի ծախսի խեղաթյուրման հետ, որը 2021 թվականի 1-ին եռամսյակում համապատասխանաբար կազմում է 73,284.58 հազ.դրամ և 113,460.84 հազ.դրամ:

▪ **Նորատուս համայնք**

Նորատուս համայնքը սպասարկող անասնաբույժի գրանցամատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ փետրվար, մարտ և ապրիլ ամիսների ընթացքում անասնաբույժների կողմից իրականացվել և գրանցվել է մատյանում սիբիրախտի պատվաստման 2,075 միջոցառում, որի վերաբերյալ կազմվել են մարտ և ապրիլ ամիսներին թվով 2 ակտ 1,989 միջոցառումների վերաբերյալ կամ մատյանում գրանցված միջոցառումներից 86 հատով /2,075-1,989/ պակաս:

Այսպիսով, 2021 թվականի փետրվար և ապրիլ ամիսներին համաճարակաբանից անասնաբույժը ստացել է *սիբիրախտի* 2,750 մլ պատվաստանյութ, ըստ ակտերի 1989 միջոցառման համար ծախսվել է 2,050 մլ և 02.06.2021 թվականի դրությամբ պատվաստանյութի մնացորդը անասնաբույժի մոտ փաստացի կազմում է 700 մլ, որն առկա էր անասնաբույժի մոտ: Սակայն, ըստ կատարված վերահաշվարկի անասնաբույժի մոտ պետք է առկա լինեին մոտ 600 մլ պատվաստանյութ, քանի որ մատյանում գրանցված էր փետրվար ամսին կատարված 101 միջոցառում, որի համար պատվաստանյութի ծախսը կազմում է մոտ 100 մլ: **Այսպիսով, իրականացված 2,075 միջոցառման համար չի ծախսվել սահմանված քանակի պարվաստանյութ կամ մատյանում գրանցված 2,075 պարվաստանյութերի համար պակաս է ծախսվել նորմայով սահմանված քանակից մոտ 100 մլ, գումարով՝ 1.33 հազ.դրամ /100*13,29/: Առկա է խեղաթյուրում Նորատուս համայնքում անասնաբույժների կողմից իրականացված 2,075 սիբիրախտի միջոցառման մասով, որի համար անասնաբույժներին վճարվել է աշխատավարձ՝ 346.52 հազ.դրամ, պարվաստանյութի ծախսը կազմել է՝ 27.25 հազ.դրամ /2,050*13,29/**

Ըստ գրանցամատյանի տվյալների մարտ և ապրիլ ամիսներին կատարվել են *խշխշան պալարի* 1,636 պատվաստում, սակայն ամփոփ հաշվարկի ակտով ներկայացվել է ընդամենը 1,795 պատվաստում կամ մատյանում գրանցվածից ավելին է ներկայացվել՝ 159 հատ: 2021 թվականի փետրվար և ապրիլ ամիսներին համաճարակաբանից անասնաբույժը ստացել է *խշխշան պալարի* 3,700 մլ պատվաստանյութ, ըստ ակտերի 1,795 միջոցառման համար ծախսվել է 3,700 մլ *խշխշան պալարի* պատվաստանյութ կամ 02.06.2021 թվականի դրությամբ անասնաբույժի մոտ պատվաստանյութի մնացորդ առկա չէր, սակայն 159 հատ պատվաստման համար չծախսված պատվաստանյութի 330 մլ, գումարով 2.74 հազ. դրամ $/330 \cdot 8.29 \cdot /$ պետք է առկա լիներ անասնաբույժի մոտ, քանի որ միջոցառումը չէր իրականացվել: ***Այսպիսով, առկա է խեղաթյուրում 57.84 հազ.դրամի $/55.10 + 2.74/$ չափով, որը հետևանք է չկատարված ծառայության դիմաց անասնաբույժին տվյալ միջոցառման համար ավելին վճարված 55.10 հազ. դրամի $/330 \cdot 167/$, և պակասորդի չափով հաշվարկված պատվաստանյութի մոտ 330 մլ, գումարով 2.74 հազ.դրամի մասով:***

Ըստ գրանցամատյանի փետրվար և մարտ ամիսներին կատարվել են դաբաղի 2,054 հատ պատվաստում, սակայն ամփոփ հաշվարկի ակտով ներկայացվել է 1,940 գլուխ պատվաստում կամ մատյանում գրանցվածից պակաս է ներկայացվել՝ 114 գլուխ: 2021 թվականի փետրվար ամսին համաճարակաբանից անասնաբույժը ստացել է *դաբաղի* 4,000 մլ պատվաստանյութ, ըստ ակտերի 1,940 միջոցառման համար ծախսվել է 4,000 մլ պատվաստանյութ, սակայն մատյանում գրանցված 114 միջոցառման համար ևս պետք է ծախսվեր մոտ 230 մլ պատվաստանյութ, որը առկա չէ: ***Այսպիսով, իրականացված 2,054 միջոցառման համար չի ծախսվել սահմանված քանակի պատվաստանյութ կամ մատյանում գրանցված 2,054 պատվաստումների համար պակաս է ծախսվել նորմայով սահմանված քանակից մոտ 235 մլ, գումարով՝ 16.74 հազ.դրամ $/235 \cdot 71.25/$: Առկա է խեղաթյուրում Նորադուռ համայնքում անասնաբույժների կողմից իրականացված 1,940 դաբաղի միջոցառման մասով, որի համար անասնաբույժներին վճարվել է աշխատավարձ՝ 223.98 հազ.դրամ $/1940 \cdot 167/$, պատվաստանյութի ծախսը կազմել է՝ 285.00 հազ.դրամ $/4000 \cdot 71.25/$:***

- Գավառ համայնքի Հացառատ թաղամաս

Գավառ համայնքի Հացառատ թաղամասը սպասարկող անասնաբույժի գրանցամատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ապրիլ և մայիս ամիսների ընթացքում անասնաբույժների կողմից իրականացվել և գրանցվել է մատյանում սիբիրախտի պատվաստման 2,036 միջոցառում, որի վերաբերյալ կազմվել են թվով 2 ակտեր՝ ապրիլ և մայիս ամիսներին 3,250 կատարված միջոցառումների վերաբերյալ կամ մատյանում գրանցված միջոցառումներից 1,214 հատով /2,036-3,250/ ավելի:

Այսպիսով, 2021 թվականի փետրվար և ապրիլ ամիսներին համաճարակաբանից անասնաբույժը ստացել է *սիբիրախտի* 4,450 մլ պատվաստանյութ, ըստ ակտերի 3,250 միջոցառման համար ծախսվել է 3,350 մլ և 02.06.2021 թվականի դրությամբ պատվաստանյութի մնացորդը կազմում է 1,100մլ, որն առկա էր անասնաբույժի մոտ: Սակայն, ըստ կատարված վերահաշվարկի անասնաբույժի մոտ պետք է առկա լիներ մոտ 2,350մլ պատվաստանյութ, քանի որ մատյանում գրանցված էր 1,214 միջոցառում ավելի քիչ, որի համար պատվաստանյութի ծախսը կազմում է մոտ 1,250 մլ, գումարով 89.65 հազ. դրամ: ***Այսպիսով, չկատարված ծառայության դիմաց անասնաբույժին տրվյալ միջոցառման համար ավելին է վճարվել 208.75 հազ. դրամ /1,250*167/, որի պակասորդ պատվաստանյութի ծախսը կազմում է մոտ 1,250 մլ, գումարով 89.65 հազ. դրամ:***

Գավառ համայնքի Հացառատ թաղամասը սպասարկող անասնաբույժի գրանցամատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ փետրվար և մարտ ամիսների ընթացքում անասնաբույժների կողմից իրականացվել և գրանցվել է մատյանում դաբաղի պատվաստման 2,625 միջոցառում, որի վերաբերյալ կազմվել են թվով 2 ակտեր՝ մարտ և ապրիլ ամիսներին 3201 կատարված միջոցառումների վերաբերյալ կամ մատյանում գրանցված միջոցառումներից 576 հատով /2,625-3,201/ ավելի: Այսպիսով, 2021 թվականի փետրվար և ապրիլ ամիսներին համաճարակաբանից անասնաբույժը ստացել է *դաբաղի* 6600 մլ պատվաստանյութ, ըստ ակտերի 3,201 միջոցառման համար ծախսվել է 6,600 մլ և 02.06.2021 թվականի դրությամբ պատվաստանյութի մնացորդ առկա չէ: Սակայն, ըստ կատարված վերահաշվարկի անասնաբույժի մոտ պետք է առկա լիներ մոտ 1,200մլ պատվաստանյութ, քանի որ մատյանում գրանցված էր 576 միջոցառում ավելի քիչ, որի համար պատվաստանյութի ծախսը կազմում է մոտ 1,200 մլ, գումարով 85.50

հազ. դրամ: **Այսպիսով, չկատարված ծառայության դիմաց անասնաբույժին տրված միջոցառման համար ավելին է վճարվել 96.19 հազ. դրամ $/576 \cdot 167/$, որի պակասորդ պատվաստանյութի ծախսը կազմում է մոտ 1,200 մլ, գումարով 85.50 հազ. դրամ:**

▪ **Գանձակ համայնք**

Գանձակ համայնքը սպասարկող անասնաբույժի գրանցամատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ փետրվար և մարտ ամիսների ընթացքում անասնաբույժի կողմից իրականացվել և գրանցվել է մատյանում դաբաղի պատվաստման 1,455 միջոցառում, որի վերաբերյալ մարտ ամսին անասնաբույժի կողմից կազմվել է ակտ 1,455 միջոցառումների կատարման վերաբերյալ և ըստ կազմված ակտի պատվաստանյութի ծախսը կազմել է 3000 մլ: Անասնաբույժի գրանցամատյանի 10-րդ էջում գրանցված 36 գլուխ դաբաղի միջոցառումը, որն է կատարողական ակտում արտացոլված չէ, որի համար պատվաստանյութի ծախսը ըստ նորմայի պետք է կազմեր 74 մլ $/36 \cdot 2 + 3\%/$: **Այսպիսով, իրականացված 1491 $/1,455 + 36/$ միջոցառման համար չի ծախսվել սահմանված քանակի պատվաստանյութ կամ մատյանում գրանցված 1 455 միջոցառումների համար պակաս է ծախսվել նորմայով սահմանված քանակից մոտ 74 մլ պատվաստանյութ, գումարով՝ 5.27 հազ.դրամ $/74 \cdot 71,25/$: Առկա է խեղաթյուրում Գանձակ համայնքում անասնաբույժների կողմից իրականացված 1,455 դաբաղի միջոցառման մասով, որի համար անասնաբույժներին վճարվել է աշխատավարձ՝ 242.99 հազ.դրամ $/1455 \cdot 167/$, պատվաստանյութի ծախսը կազմել է՝ 103,67 հազ.դրամ $/1,455 \cdot 71,25/$:**

Ըստ գրանցամատյանի տվյալների ապրիլ ամսին կատարվել է սիբիրախտի 516 պատվաստում, սակայն ամփոփ հաշվարկի ակտով ներկայացվել է 534 պատվաստում կամ մատյանում գրանցվածից ավելին է ներկայացվել՝ 18 հատ $/534 - 516/$: Այսպիսով, ապրիլ ամսին ըստ ամփոփ հաշվարկի ակտի իրականացվել է ձիերի սիբիրախտի 18 գլուխ պատվաստում, սակայն անասնաբույժի գրանցամատյանում ներկայացված չէ: 2021 թվականի փետրվար և ապրիլ ամիսներին համաճարակաբանից անասնաբույժը ստացել է սիբիրախտի 2,050 մլ պատվաստանյութ, ըստ ակտերի 1,407 միջոցառման համար ծախսվել է 1 450 մլ սիբիրախտի պատվաստանյութ կամ 02.06.2021 թվականի դրությամբ անասնաբույժի մոտ պատվաստանյութի մնացորդը կազմում էր 600 մլ, սակայն 18 հատ պատվաստման համար չծախսված պատվաստանյութի 18,5 մլ $/18 \cdot 1 + 3\%/$,

գումարով 0.25 հազ. դրամ /18,5*13,29/պետք է առկա լինեն անասնաբույժի մոտ, քանի որ միջոցառումը չէր իրականացվել: **Այսպիսով, առկա է խեղաթյուրում 3.26 հազ.դրամի /3.01+0.25/ չափով, որը հետևանք է չկատարված ծառայության դիմաց անասնաբույժին տվյալ միջոցառման համար ավելին վճարված 3.01 հազ. դրամի /18*167/, և պակասորդի չափով հաշվարկված պատվաստանյութի մոտ 18 մլ, գումարով 0.25 հազ.դրամի մասով:**

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Անասնահալկահամաճարակային միջոցառումների յուրահատկություններից ելնելով, ինչպես նաև աշխատանքները չխոչընդոտելու նպատակով, ԳԾԿ-ի կողմից տարածաշրջանների անասնաբույժներից ամեն ամիս հաշվետվությունների ձևաչափերի հետ միաժամանակ պահանջվել է անասնաբուժական աշխատանքային գրանցամատյանների լուսապատճենները, որոնցում զետեղված միջոցառումների մասին գրառումները համապատասխանել են տվյալ միջոցառումների մասով ներկայացված արձանագրությանը, եզրակացությանը, համայնքների կատարողականին և ամփոփ հաշվարկի ակտին:

Ելնելով վերոգրյալից ևս մեկ անգամ վերստուգվել և արձանագրվել է ԳԾԿ ներկայացված վերոհիշյալ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության հավաստիությունը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ հաշվեքննություն իրականացնող խմբի անդամների կողմից արձանագրված խախտումները և խեղաթյուրումները նախկինում երբևէ վերահսկող մարմնի կողմից չի արձանագրվել: ԳԾԿ-ն սկսել է ստուգումներ այն տարածաշրջանային համայնքներում, որտեղ արձանագրվել են խախտումներ և համապատասխան խիստ միջոցներ կձեռնարկվեն խեղաթյուրումների վերացման և նմանատիպ դեպքերի բացառման ուղղությամբ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված խեղաթյուրումը ընդունվել է:

Եզրակացություն

Անասնաբույժների կողմից վարվող անասնահալկահամաճարակային միջոցառումների գրանցամատյանում գրանցված միջոցառումների քանակները համեմատվել են անասնաբույժների կողմից կազմված ակտով արձանագրված միջոցառումների, անասնազխաքանակի և ծախսված պատվաստանյութերի քանակների հետ: Հայտնաբերվել են համատարած շեղումներ գրանցամատյանում

ներկայացված տվյալների, անասնաբույժների կողմից կազմված ակտերի և փաստացի հաշվարկված պատվաստանյութի քանակների հետ, ինչը հանգեցնում է անասնաբույժների կողմից ծախսված պատվաստանյութերի ամբողջ գումարի, ինչպես նաև անասնաբույժներին վճարված աշխատավարձի ծախսի խեղաթյուրման հետ, որը կազմում է 2021 թվականի 1-ին եռամսյակում համապատասխանաբար կազմում է 73,284.58 հազ.դրամ և 113,460.84 հազ.դրամ:

**14. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001
միջոցառման շրջանակներում անասնաբույժների
գրանցամատյանների բնօրինակների և ԳԾԿ ներկայացված
գրանցամատյանների լուսապատճենների տվյալների
համեմատության վերաբերյալ**

**Առկա է խեղաթյուրում լուսապատճենների և գրանցամատյանների
բնօրինակների համեմատության մասով: Համադարձ շեղումները հանգեցնում
են խեղաթյուրման կապված անասնաբույժների կողմից ծախսված
պատվաստանյութերի ամբողջ գումարի, ինչպես նաև անասնաբույժներին
վճարված աշխատավարձի մասով, որը կազմում է 2021 թվականի 1-ին
եռամսյակում համապատասխանաբար 73,284.58 հազ.դրամ և 113,460.84
հազ.դրամ:**

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների
կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001
միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու
ժամանակահատվածի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 80,893.30 հազ.
դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,411.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝
11,411.31 հազ. դրամ:

Հանմաձայն անասնաբույժի հետ կնքված պայմանագրի 3.3.9 կետի,
անասնաբույժը ակտերի հետ միասին համաճարակաբանին է ներկայացրել
միջոցառումների վերաբերյալ գրանցամատյանում կատարված գրառումների
լուսապատճենները (այսուհետ՝ լուսապատճեններ), որը համաճարակաբանի կողմից
ամփոփ հաշվարկի ակտերի հետ միասին ներկայացվել է ԳԾԿ-ին:

Հաշվեքննության ընթացքում համեմատվել են լուսապատճենները և գրանցամատյանների բնօրինակները: Արդյունքում, հայտնաբերվել են համատարած շեղումներ լուսապատճենների և գրանցամատյանների բնօրինակների հետ, ինչը հանգեցնում է անասնաբույժների կողմից ծախսված պատվաստանյութերի ամբողջ գումարի, ինչպես նաև անասնաբույժներին վճարված աշխատավարձի ծախսի խեղաթյուրման հետ, որը կազմում է 2021 թվականի 1-ին եռամյակում համապատասխանաբար 73,284.58 հազ.դրամ և 113,460.84 հազ.դրամ:

▪ **Նորատուս համայնք**

- ✓ Մարտ ամսվա լուսապատճեններում բացակայում են գրանցամատյանի 1-ին և 2-րդ էջերը, որտեղ առկա է 114 դաբաղի, 101 սիբիրախտի գլխաքանակի պատվաստում և 87 հատ բրուցեյլոզի նմուշառում: Նշված միջոցառումները կատարվել են փետրվար ամսին և ակտերում բացակայում են:
- ✓ Ապրիլ ամսին գրանցամատյանի 14-րդ էջում ներկայացված սիբիրախտի պատվաստման ընդհանուր գլխաքանակի թիվը կազմում է 255, սակայն լուսապատճենի 14-րդ էջում ընդհանուր գլխաքանակի թիվը նշված է 200, կամ 55-ով պակաս: Մայիս ամսին ակտով ներկայացված ԽԵԿ-ի բրուցեյլոզի թվով 14 նմուշառումը գրանցամատյանում բացակայում է, սակայն առկա է լուսապատճենում:

▪ **Գավառ համայնքի Հացառատ թաղամաս**

- ✓ Մարտ ամսին ԳԾԿ ներկայացված գրանցամատյանների լուսապատճենների համաձայն փետրվար ամսին կատարվել է 1,311 և մարտին՝ 231 գլուխ դաբաղի պատվաստում, ընդամենը փետրվար – մարտ ամիսներին իրականացվել է 1,542 գլուխ դաբաղի պատվաստում: Սակայն գրանցամատյանում դաբաղի պատվաստումների ընդհանուր թիվը փետրվար-մարտ ամիսների համար կազմում է 2,625 գլուխ / 1,311+1,314/:
- ✓ Անասնաբույժի գրանցամատյանում ապրիլ ամսին դաբաղի պատվաստումներ ընդհանրապես գրանցված չեն, իսկ ԳԾԿ-ին ներկայացված գրանցամատյանների լուսապատճենների համաձայն ապրիլ ամսին կատարվել է 1,632 գլուխ դաբաղի պատվաստում:
- ✓ Հիմնականում անասնաբույժի գրանցամատյանի էջերում նշված «ընդամենը գլխաքանակ» տողը չի համապատասխանում իրականացված միջոցառումների հանրագումարին:
- ✓ ԳԾԿ-ին ապրիլ ամսվա համար ներկայացված գրանցամատյանի լուսապատճենների էջերի հերթականությունը տարբերվում է գրանցամատյանի բնօրինակից: Մասնավորապես, ապրիլ ամսին ներկայացրած գրանցամատյանի լուսապատճենը սկսվում է 10-րդ էջից, որտեղ իրականացված միջոցառումների սկսման ամսաթիվն է՝ 26.03.2021:

Այնուհետև էջերի հաջորդականությունը շարունակվում է՝ 8,9,10,11 և 10: Ստացվում է, որ ապրիլ ամսվա համար անասնաբույժի կողմից ներկայացված գրանցամատյանի լուսապատճեններում առկա են 3 հատ 10-րդ էջ: Ընդ որում, այդ բոլոր 10-րդ էջերի բովանդակությունը՝ կատարված միջոցառումները, անասնատերերի անունները և քանակը տարբեր են: Բնօրինակի 10-րդ էջում գրանցված են խշխշան պալարի պատվաստումները, իսկ լուսապատճենների երեք օրինակները ներկայացված են՝ մեկ դեպքում խշխշան պալարի համար, մյուս դեպքում սիբիրախտի, հաջորդում՝ դաբաղի: Առկա է նաև բնօրինակից շեղման այլ դեպքեր, երբ անասնատիրոջ անվան դիմաց գրանցված անասնագլխաքանակը լուսապատճենում խեղաթյուրվել է: Բացի այդ, նշված հարցի վերաբերյալ կիրառվել է հաշվեքննության արտաքին հաստատման ընթացակարգը, որի արդյունքում ստացվել է Գավառ համայնքի Հացառատ թաղամասի բնակիչների սեփական անասնագլխաքանակի վերավերյալ տեղեկատվություն 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ: Օրինակները ներկայացվում են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 5

Հ/Հ	Անասնատիրոջ անուն, ազգանուն	Ըստ գրանցամատյանի		Ըստ լուսապատճենի		Ըստ Գավառ համայնքի տեղեկատվության 01.01.2021թ. դրությամբ, իսԵԿ
		էջ	անասնագլխաքանակ, իսԵԿ, հատ	էջ	անասնագլխաքանակ, իսԵԿ, հատ	
1	Բ.Ա.	9	18	9	118	17
2	Գ.Ա	9	37	9	137	60
3	Ն.Ռ.	9	28	9	128	19
4	Մ.Զ.	9	4	9	104	4
5	Մ.Ա.	9	73	9	173	30
6	Դ.Վ.	10	40	10	140	74
7	Դ.Ռ.	10	8	10	88	

- ✓ Առկա են նաև անհամապատասխանություններ բրուցելյոզի ախտորոշման մասով: Մասնավորապես, համադրելով գրանցամատյանների, լուսապատճենների և ամփոփ հաշվարկի ակտերի տվյալները ստացվել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 6, հատ

Ամիս	ԽԵԿ			Տարբերություն գրանցամատյանի և ամփոփ հաշվարկի ակտ	ՄԵԿ			Տարբերություն գրանցամատյանի և ամփոփ հաշվարկի ակտ
	Բնօրինակ	Լուսապատճեն	Ամփոփ հաշվարկի ակտ		Բնօրինակ	Լուսապատճեն	Ամփոփ հաշվարկի ակտ	
Փետրվար-Մարտ	527	531	531	-4				
Ապրիլ	386	373	377	9	124	115	115	9
Մայիս	183	227	186	-3				

▪ **Գեղարքունիք համայնք**

- ✓ Համայնքը սպասարկող անասնաբույժի գրանցամատյանում բացակայում է ամփոփ հաշվարկի ակտում ներկայացված 40 հատ ՄԵԿ-ի բրուցեյլոգի նմուշառման դեպք:
- ✓ Գավառի տարածաշրջանի Սարուխան համայնքը սպասարկող անասնաբույժի գրանցամատյանով ՄԵԿ-ի բրուցեյլոգի նմուշառումները 8 հատով ավելին են ամփոփ հաշվարկի ակտով ներկայացված միջոցառումներից:

▪ **Հայրավանք համայնք**

- ✓ սպասարկող անասնաբույժի գրանցամատյանում փետրվար-մարտ ամսին ԽԵԿ-ի համար գրանցված են 253 հատ միջոցառում, իսկ ամփոփ հաշվարկի ակտով ներկայացված է մարտ ամսին՝ 265 հատ:
- ✓ Մարտ ամսին՝ ըստ անասնաբույժի գրանցամատյանի ՄԵԿ-ի համար գրանցված է բրուցեյլոգի 480 հատ միջոցառում, իսկ ամփոփ հաշվարկի ակտով մարտ ամսին որևէ միջոցառում իրականացված չէ:
- ✓ Համայնքը սպասարկող անասնաբույժի գրանցամատյանով ապրիլ ամսին ԽԵԿ-ի համար գրանցված է բրուցեյլոգի 132 հատ միջոցառում, իսկ ըստ ամփոփ հաշվարկի ակտում նշված է 138 հատ միջոցառում:
- ✓ Ապրիլ ամսին ըստ անասնաբույժի գրանցամատյանի ՄԵԿ-ի համար գրանցված է բրուցեյլոգի 250 հատ միջոցառում, իսկ ամփոփ հաշվարկի ակտում նշված է 624 հատ է:

▪ **Նաիրի տարածաշրջանի վերաբերյալ**

Նաիրի տարածաշրջանի 18 համայնքները սպասարկվում են անասնահամաճարակային միջոցառումները իրականացնող 11 անասնաբույժների կողմից, կամ որոշ դեպքերում մի քանի համայնքներ սպասարկվում է նույն անասնաբույժի կողմից:

Համաճարակաբանի կողմից անասնաբույժներին բաշխած պատվաստանյութերի հաշվառում չի վարվել: Մասնավորապես համաճարակաբանի մոտ վարվող մատյանում նշված չեն պատվաստանյութի տրամադրման օր/ ամիս: Առկա է անհամապատասխանություն ԳԾԿ-ի և համաճարակաբանի հետ կնքված պայմանագրի 1.2.6 կետով սահմանված պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հակահամաճարակային միջոցառումների յուրահատկությունից ելնելով, ինչպես նաև աշխատանքները չխոչընդոտելու նպատակով, ԳԾԿ-ի կողմից տարածաշրջանների անասնաբույժներից ամեն ամիս հաշվետվությունների ձևաչափերի հետ հավելյալ պահանջվել է նաև աշխատանքային գրանցամատյանների լուսապատճենները, որոնցում զետեղված միջոցառումների մասին գրառումները համապատասխանել են տվյալ միջոցառումների մասով ներկայացված արձանագրության, եզրակացության, համայնքների կատարողականի և ամփոփ հաշվարկի ակտի հետ:

Ելնելով վերոգրյալից ևս մեկ անգամ վերստուգվել և արձանագրվել է ԳԾԿ ներկայացված վերոհիշյալ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության հավաստիությունը: ԳԾԿ-ն սկսել է ստուգումներ այն տարածաշրջանային համայնքներում, որտեղ արձանագրվել են խախտումներ և համապատասխան խիստ միջոցներ կձեռնարկվեն խեղաթուրումների վերացման և նմանատիպ դեպքերի բացառման ուղղությամբ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված խեղաթուրումը ընդունվել է:

Եզրակացություն

Գրանցամատյանների ուսապատճենների և բնօրինակների համեմատությամբ հայտնաբերվել են համատարած շեղումներ, ինչը հանգեցնում է անասնաբույժների կողմից ծախսված պատվաստանյութերի ամբողջ գումարի, ինչպես նաև անասնաբույժներին վճարված աշխատավարձի ծախսի խեղաթուրման, որը

կազմում է 2021 թվականի 1-ին եռամսյակում համապատասխանաբար 73,284.58 հազ.դրամ և 113,460.84 հազ.դրամ:

**15. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11003
միջոցառման շրջանակներում ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից 2021
թվականի առաջին եռամսյակում ներկայացված
հաշվետվությունների քանակային /արդյունքային/
ցուցանիշների վերաբերյալ**

***Առկա է խեղաթյուրում 11,761.54 հազ.դրամ գումարի չափով կապված
Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների
վերաբերյալ 01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և
ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների հետ:***

Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության, իրականացվել է 164,849 հատ լաբորատոր փորձաքննություն, որից 161,034 հատ բրուցելյոզի փորձաքննություն: Բրուցելյոզ հիվանդության կասկածով ՀԱԲԼԾԿ-ի մարզային ստորաբաժանումները կենտրոնական լաբորատորիային տրամադրվել են 1,787 հատ նմուշներ: Արդյունքում պարզ է դառնում, որ 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ըստ ՀԱԲԼԾԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀԱԲԼԾԿ-ին է տրամադրվել 159,247 հատ /161,034-1,787/ նմուշներ: ԳԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության՝ հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանով նախատեսվել է իրականացնել 150,950 հատ բրուցելյոզի նմուշառում, փաստացի կատարվել է 122,742 հատ նմուշառում: Հաշվետու ժամանակահատվածի փաստացի և պլանային ցուցանիշների տարբերությունը կազմել է 28,208 հատ, որը կազմակերպության կողմից պարզաբանվել է, որ պայմանավորված է լաբորատորիաների աշխատանքների ուշ վերսկսմամբ:

Այսպիսով, 01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայացված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 36,505 հատ /159,247-122,742/, որը գումարային արտահայտությամբ կազմում է 11,761.54 հազ.դրամ /36,505*322.19/: ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների անհամապատասխանությունը հանգեցրել է 11,761.54 հազ.դրամ *խեղաթյուրման*:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ծրագրի շրջանակներում անասնաբույժի կողմից բրուցելյոզի նկատմամբ արյունառումը դիտարկվում է ***մեկ նմուշ***, որի նկատմամբ ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացվում է մի քանի ***փորձաքննություններ՝ ազյուրինացիայի ռեակցիա, ՊՇՌ, ԻՖԱ մեթոդներով***:

Հարկ է նշել, որ անասնաբույժի կողմից ներկայացվում է նմուշ, իսկ տվյալ նմուշի նկատմամբ իրականացվում են լաբորատոր փորձաքննություններ վերոգրյալ մեթոդներով:

Հետևաբար, նմուշի և փորձաքննության միջև տարբերությունները առկա կլինեն, որն էլ արտացոլվել է ԳԾԿ-ի կողմից ներկայացված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների միջև:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված արձագանքը հաշվեքննողների կողմից ընդունելի չէ:

Եզրակացություն

2021 թվականի առաջին եռամսյակի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայացված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 36,505 հատ, որը գումարային արտահայտությամբ կազմում է 11,761.54 հազ.դրամ: ***Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև: Հաշվետվությունների միջև առկա***

անհամապատասխանությունը հանգեցրել է 11,761.54 հազ.դրամ գումարի չափով խեղաթյուրման:

Նախարարությանը

Առաջարկվում է արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից կազմված հաշվետվությունները ներկայացնել նույն ժամանակահատվածի կտրվածքով:

16. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում վարկառուի կողմից վարկի ստացման համար ֆինանսական կազմակերպությանը ներկայացված ֆերմերների հետ կնքված պայմանագրերի ցանկի և կնքված պայմանագրերով փաստացի մթերված քանակների միջև՝ 2,154.00 գումարի չափով:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1022 Ծրագրի 12004 միջոցառման շրջանակներում 4522 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 489,909.40 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 489,909.40 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 489,909.40 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատվել է գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Նշված ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը: Սուբսիդավորման ենթակա վարկերը պետք է նպատակաուղղվեն բացառապես մթերվող գյուղատնտեսական հումքի արժեքի վճարմանը:

2021թ. առաջին եռամսյակում նշված ծրագրի շրջանակներում վճարվել է 489,909.40 հազ.դրամ գումար: Նշված գումարը վճարվել է նախորդ տարիներին ծրագրի ընթացքում տրամադրված վարկերի տոկոսագումարների վճարման համար: Նշենք, որ 2021թ. առաջին եռամսյակում կնքված նոր վարկային պայմանագրերի տոկոսադրույքների սուբսիդավորում չի իրականացվել:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով նշված ծրագրի շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, պարզվում է, որ առաջին եռամսյակում ներկայացվել և հաստատվել է մեկ շահառուի վերաբերյալ հայտ՝ «Սպայկա» ՍՊԸ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սպայկա» ՍՊԸ-ն 2021թ. փետրվար ամսին ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացրել ՀՀ կառավարության վերոգրյալ որոշմամբ սահմանված ձև 1 –ի փոփոխված տարբերակը, ինչպես նաև ֆերմերների հետ կնքված պայմանագրերը, ընդ որում՝ պայմանագրերը կնքվել են 5 /հինգ/ ամիս ժամկետով, որոնցից 14 դեպքով 01.11.2020թ-01.04.2021թ. ժամանակաշրջանի համար, իսկ 2 դեպքով 01.01.20-21թ-01.06.2021թ. ժամանակաշրջանի համար անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել ընկերության կողմից նշված ծրագրով իրականացված կաթի մթերումների պայմանագրերի կնքման օրվանից ներկայացված սկզբնական փաստաթղթերը:

Համաձայն ընկերության կողմից ներկայացված ձև 1-ի տեղեկատվության, ընկերությունը կաթի մթերման պայմանագրեր է կնքել 17 ֆերմերների հետ 50,137.60 հազ դրամ գումարի չափով, սակայն հաշվեքննությանը ներկայացվել է թվով 16 պայմանագրեր: Պայմանագրերից 2-ը կնքվել են 01.01.2021թ., սակայն դրանց վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը հանդիսացել է 16.11.2020թ. վարկի տրամադրման հիմք: Ավելին, մեկ դեպքով, չունենալով պայմանագիր 10.11.2020թ. և 16.11.2020թ. կատարվել է մթերում ընդհանուր 3339 լիտր կաթ, որի դիմաց 16.11.2020թ. և 17.11.2020թ. կատարվել է ընդհանուր 680.80 հազ. դրամ վճարում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ըստ Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) պայմանների ֆինանսական կազմակերպությունների (այսուհետ՝ ՖԿ) կողմից տրամադրված վարկերի չափը պետք է հաշվարկվի Ծրագրի 23-րդ կետի 1-

ին ենթակետի՝ «1) տրամադրվող վարկի չափը (գումարը) չպետք է գերազանցի վարկառուի և գյուղացիական տնտեսությունների և (կամ) կաթի հավաքմամբ զբաղվող իրավաբանական անձանց, այդ թվում՝ կոոպերատիվների և (կամ) անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ վաճառող) միջև կնքված պայմանագրերում նշված հումքի գնման արժեքը, իսկ հումքի գնման նվազագույն գներով հաշվարկված լինելու դեպքում՝ հումքի գնման ակնկալվող արժեքի 120 տոկոսը, ընդ որում, տրամադրվող վարկի չափի հաշվարկում չի ներառվում վարկառուին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող կամ վարկառուի հիմնադիր կամ բաժնետեր հանդիսացող անձանց կամ նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) կողմից մշակվող հողատարածքների բերքից կամ գյուղատնտեսական կենդանիների կաթից կամ գյուղատնտեսական կենդանիներից կամ շինշիլայից վարկառուի հետ կնքված հումքի գնման պայմանագրերում նշված արժեքը.» հիման վրա և Էկոնոմիկայի նախարարություն պետք է տրամադրվի միայն ծրագրի 28-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված Ձև 1-ը:

Ձև 1-ը պետք է կազմված լինի վարկառուի և գյուղացիական տնտեսությունների միջև կնքված հումքի գնման պայմանագրերի հիման վրա, որում պայմանագրի կնքման ժամկետը չի նշվում, իսկ պայմանագրերը Էկոնոմիկայի նախարարություն չի ներկայացվում այդ պատճառով Էկոնոմիկայի նախարարությունը չէր կարող ուսումնասիրել պայմանագրերի և Ձև 1-ի համապատասխանությունը: Այն պետք է ստուգվեր ՖԿ-ի կողմից և անհամապատասխանությունների առկայության դեպքում շահառուից պահանջվեր կատարել անհրաժեշտ ճշգրտումներ, որից հետո վարկի հաստատման հարցը քննարկվեր վարկային կոմիտեում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ընդունվել են:

Եզրակացություն

«Սպայկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ձև 1-ի տեղեկատվությամբ, ընկերությունը կաթի մթերման պայմանագրեր է կնքել 17 ֆերմերների հետ, սակայն հաշվեքննությանը ներկայացվել է թվով 16 պայմանագիր: Պայմանագրերից 2-ը կնքվել են 01.01.2021թ., սակայն դրանց վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը հանդիսացել է ավելի վաղ՝ 16.11.2020թ. վարկի տրամադրման հիմք: ***Առկա է խեղաթյուրում վարկառուի կողմից վարկի սրացման համար ֆինանսական կազմակերպությանը ներկայացված ֆերմերների հետ կնքված***

պայմանագրերի ցանկի և կնքված պայմանագրերով փաստացի մթերված քանակների միջև՝ 2,154.00 գումարի չափով:

17.1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ / ձև N 1/

Առկա է խեղաթյուրում վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պարկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը ներկայացվել է նախատեսված մթերման համար՝ 258,195 լիտր ավելին՝ 52,134.00 հազ. դրամ գումարի չափով:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1022 Ծրագրի 12004 միջոցառման շրջանակներում 4522 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 489,909.40 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 489,909.40 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 489,909.40 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/ այն համադրվել է ֆերմերների համայնքների ղեկավարների կողմից տրամադրված «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» արտացոլված տեղեկության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ, ինչպես նաև ԳԾԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» տվյալների հիման վրա տվյալ տարածաշրջանի անասնաբույժի կողմից տրված տեղեկանքների հետ:

Արդյունքում, պարզվել է որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են ներքոնշյալ տարբերությունները, մասնավորապես՝

Աղյուսակ 7, հազ.դրամ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվություն		Ըստ համայնքի ղեկավարի և ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի	Ծանոթություն
		Կովերի գլխաքանակ	Մթերված կաթի քանակ /լ/	Կովերի գլխաքանակ	
1	Ճ. Վ.	1	85453	3	Ծանոթություն 1
2	Ա. Ի.	50	29763	0	
3	Ս. Ս.	29	20966	0	
4	Ն. Վ.	40	22881	0	
5	Բ. Ա.	70	92528	0	
6	Շ. Ս.	20	6604	20	Ծանոթություն 2
7	Շ. Կ.	20	14467	0	

Ծանոթություն 1.

Նշված ֆերմերի կողմից, ըստ ներկայացված տեղեկատվության, պլանավորվել է 01.11.2020թ-ից 5 ամիս ժամանակահատվածում մթերել 85453 լիտր կաթ 3 գլխաքանակ կենդանիով, այն համեմատելով այլ ֆերմերների կենդանիների քանակների և մթերվող կաթի ծավալների հետ՝ հնարավոր չէր իրականացնել:

Ծանոթություն 2.

Համաձայն ընկերության կողմից ներկայացված ձև 1-ի տեղեկատվության, ընկերությունը որպես առանձին ֆերմեր կաթի մթերման պայմանագրեր է կնքել Ս.Շ. և Կ. Շ. հետ: Համաձայն Ստեփանավանի համայնքապետարանի կողմից 18.06.2021թ. տրամադրված տեղեկանքի Ս.Շ. և Կ. Շ. հանդիսանում են մայր և որդի: Սակայն, «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» և ԳԾԿ ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» տվյալների Կ. Շ.-ի անվամբ խոշոր եղջերավոր կենդանիներ հաշվառված չեն:

Առկա է խեղաթյուրում վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պարկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը ներկայացվել է նախատեսված մթերման համար՝ 258195 լիտր ավելին՝ 52,134.00 հազ. դրամ գումարի չափով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված խեղաթյուրմանը ըստ էության արձագանք չի ներկայացվել:

Եզրակացություն

Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը Ծրագրին մասնակցող ֆերմերներին պատկանող փաստացի անասնազվաքանակների հետ: Պարզվել է որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են տարբերություններ, որոնք հիմք են հանդիսացել խեղաթյուրման՝ 52,134.00 հազ. դրամ գումարի չափով: **Տարբերություն գումարը հաշվարկվել է ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության և համայնքի ղեկավարի ու ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի անասնազվաքանակի տարբերություն ունեցող պայմանագրերի մասով:**

18.1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակիցների պարզևատրման վերաբերյալ

Կրկնվող կետ

Առկա է խեղաթյուրում 47,423.60 հազ.դրամի չափով կապված Նախարարության կողմից սխալ հողվածի ներքո պարզևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հարվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1058 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4111, 4112 և 4113 հոդվածներով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշգրիտ պլանով նախատեսվել է հատկացնել

358,900.50 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 345,856.81 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 423,272.63 հազ. դրամ:

1058-11001 ծրագրի՝ «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» միջոցառման շրջանակում կատարվել են փաստացի ծախսեր 41100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» և 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածներով: Ստորև ներկայացված աղյուսակում նշված է այդ հոդվածների գծով աշխատակիցների հաշվարկված վճարները՝ տարանջատելով պարգևատրումները մնացած այլ վճարներից, որոնք ներկայացված են «Հիմնական աշխատավարձ» սյունակում՝

Աղյուսակ 8, հազ.դրամ

Հոդվածի կոդ	Հոդվածի անվանում	Հիմնական աշխատավարձ	Պարգևատրում	Պարգևատրման տեսակարար կշիռը հիմնական աշխատավարձում
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	270,051.90	47,423.60	17.5%
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	-	49,150.90	0%
4113	Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	-	61,819.20	0%
	Ընդամենը	270,051.90	158,393.70	58.6 %

Ինչպես պարզվում է 2021թ. երեք ամիսների ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել են 47,423.60 հազ. դրամ գումարի չափով 41100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Նշված խնայողությունները

առաջացել են 2021թ. ընթացքում նախարարության հաստիքացուցակով հաստատված թափուր պաշտոնները չհամալրելու արդյունքում:

Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջեային և հանրային հափվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Նույն հոդվածի 10-րդ մասով սահմանված է, որ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ *անմիջական ղեկավարի առաջարկությամբ* կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով պարգևատրումների տրամադրման ընթացակարգերը պարզվեց, որ աշխատակիցների որակյալ աշխատանքների կամ հատուկ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ հիմնավորումները բացակայում են:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված համապատասխան միջոցների շրջանակներում նախարարության աշխատողներին պարգևատրումները տրվում են նախարարի համապատասխան հրամանների

համաձայն, որոնցում հստակ նշվում է նաև պարգևատրելու հիմքը՝ «աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու և հատուկ առաջադրանքների կատարման համար», ինչը համարժեք է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում «հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար» ձևակերպմանը: Աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պարգևատրում տալը չի հանդիսանում սխալ հոդվածով պարգևատրման տրամադրում, քանի որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին **կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից** և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Ներկայումս քննարկվում է՝ Օրենքի պահանջներին համապատասխան, աշխատակիցներին որակյալ աշխատանքների կամ հատուկ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ անմիջական ղեկավարների կողմից հիմնավորումների տրամադրման ընթացակարգը, որի հիման վրա նշված հոդվածից կիրականացվեն պարգևատրումները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի N 5 հրամանի հավելված 16-ի համաձայն՝ 411100 - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածով պարգևավճարներ չեն վճարվում: Ինչ վերաբերվում է աշխատակիցներին որակյալ աշխատանքների կամ հատուկ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ անմիջական ղեկավարների կողմից հիմնավորումների տրամադրման ընթացակարգի քննարկմանը, ապա այն կուսումնասիրվի հետագա հաշվեքննությունների ընթացքում, որի հիման վրա նշված հոդվածից կիրականացվեն պարգևատրումները:

Եզրակացություն

2021թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել են 411100 «Աշխատողների աշխատավարձեր և

հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Ինչը հակասում է **ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջեային և հանրային հարվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի պահանջներին: Առկա է խեղաթյուրում 47,423.60 հազ.դրամի չափով:**

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

19. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման պլանային ցուցանիշների վերաբերյալ

**Առկա է անհամապատասխանություն Դրամաշնորհի Պայմանագրի
Հավելված 1-ով սահմանված պահանջների մասով:**

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշրված պլանով նախատեսվել է հատկացնել 80,893.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,411.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 11,411.31 հազ. դրամ:

ԳԾԿ-ի և համաճարակաբանների միջև պայմանագրերը կնքվել են սկսած 2021 թվականի հունվար ամսից, իսկ անասնաբույժների հետ՝ 2021 թվականի փետրվար ամսից:

Անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի Հավելված 2-ով սահմանվել է յուրաքանչյուր անասնաբույժի համար տարեկան կտրվածքով նախատեսված հետազոտությունների և պատվաստումների պայմանական գլխաքանակը և մեկ պայմանական գլխի համար նախատեսված միավորի արժեքը: Սակայն իրականացվելիք հետազոտությունների և պատվաստումների քանակը ըստ եռամսյակների տարանջատված չէ:

Ստորև Աղյուսակ 9- ով ներկայացվում է 2021 թվականին անասնաբույժների հետ կնքված պայմանագրերով նախատեսված հետազոտությունների և պատվաստումների քանակը, ինչպես նաև նրանց կողմից մարտ ամսին կատարված միջոցառումների քանակը:

Աղյուսակ 9, հազ.դրամ

Հ/Հ	Պայմանագրի քանակ	ՀՀ Մարզեր	Պայմանական գլխի միավորի արժեքը (ՀՀ դրամ)	2021 թ. տարեկան նախատեսված պլանային ցուցանիշներ			2021թ. մարտ ամսվա ընթացքում փաստացի իրականացված միջոցառումներ		
				Միջոցառումների /հատ/	Պայմանական գլուխ	Ընդանենը՝ ծառայություն	Միջոցառումների /հատ/	Պայմանական գլուխ	Ընդանենը՝ ծառայություն
1	2	3	4	5	6	7=6*4	8	9	10=9*4
1	5	Երևան	167	25,176	24,546.40	4,099,248.80	1,923	1,923.00	321,141.00
2	55	Արարատի մարզ	167	435,047	397,718.60	66,419,006.20	51,022	51,022.00	8,520,674.00
3	46	Արմավիրի մարզ	167	581,499	520,150.20	86,865,083.40	76,442	76,340.40	12,748,847.00
4	67	Արագածոտնի մարզ	167	636,865	606,810.20	101,337,303.40	80,920	80,696.80	13,476,365.60
5	32	Վայոց ձորի մարզ	167	175,727	170,444.20	28,464,181.40	26,259	26,221.00	4,378,907.00
6	57	Սյունիքի մարզ	167	484,254	436,754.80	72,938,051.60	66,989	66,447.00	11,096,649.00
7	46	Կոտայքի մարզ	167	455,884	443,445.60	74,055,415.20	42,295	41,204.60	6,881,168.00
8	74	Գեղարքունիքի մարզ	167	928,304	885,102.80	147,812,167.60	124,058	122,102.80	20,391,168.00
9	42	Տավուշի մարզ	167	298,520	290,825.80	48,567,908.60	51,345	51,250.60	8,558,850.00
10	65	Շիրակի մարզ	167	822,085	791,343.40	132,154,347.80	85,736	85,716.00	14,314,572.00
11	68	Լոռու մարզ	167	617,597	608,477.40	101,615,725.80	76,482	76,482.00	12,772,494.00
	557	Ընդամենը		5,460,958	5,175,619.40	864,328,439.80	683,471	679,406.20	113,460,835.60

Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված պահանջների մասով: Դրամաշնորհի Պայմանագրով նախատեսված է իրականացնել 5,303,042 հակաանասնահամաճարակային միջոցառում, իսկ 01.04.2021 թվականի դրությամբ անասնաբույժների հեղկնքված պայմանագրերով միջոցառումների թիվը կազմում է 5,460,958 հատ, կամ 157,916 միջոցառումով ավելի, որը գումարային արտահայտությամբ կազմում է 26,371.97 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ձեր կողմից արձանագրված դիտողությունն ընդունելի է համաձայն հավելված 2-ի յուրաքանչյուր անասնաբույժի համար տարեկան կտրվածքով նախատեսված իրականացվելիք հետազոտությունների և պատվաստումների քանակը այսուհետ կշտկվի և կտարանջատվի ըստ եռամսյակների:

Դրամաշնորհի պայմանագրով նախատեսված 5.303.042 հակահամաճարակային միջոցառումներն ավելացել են 157.916 հատով, որի համար հիմք է հանդիսացել ԳԾԿ-ին տարեսկզբին տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված տեղեկանքները՝ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի հաշվառման արդյունքների մասին, որի արդյունքում ԳԾԿ-ն պարտավորվում է ՀՀ բոլոր համայնքներում հաշվառված ամբողջ գլխաքանակը պարտադիր ներառել «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ընդունվել են:

20.1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի երեք ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1058 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4111, 4112 և 4113 հոդվածներով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 358,900.50 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 345,856.81 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 423,272.63 հազ. դրամ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ 30-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը, որում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով 2021թ. առաջին եռամսյակում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ըստ հրամանի՝ 25.01.2021թ. դրությամբ նախատեսվում է 459 հաստիքային միավոր, որից 112-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 24.4%: 31.03.2021թ. դրությամբ համաձայն նշված հրամանի հաստիքների թիվը կազմում է նույնպես 459 միավոր, որից 111-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 24.1%: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ 31.03.2021թ. դրությամբ 111 թափուր հաստիքներից 104-ը 01.01.2021թ. դրությամբ նույնությամբ մնացել են թափուր, իսկ 75 միավորը 01.12.2020թ. դրությամբ:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Էկոնոմիկայի նախարարությունում առ 15.07.2021թ. տեղեկատվական հարթակով անցկացվել է 01.01.2021թ. դրությամբ առկա թափուր հաստիքներն զբաղեցնելու համար հայտարարվել է թվով 43 մրցույթ, որից անցկացվել են 33-ը: Արդյունքում թվով 26 թափուր պաշտոններ համալրվել են, թվով 6 մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել կամ մրցույթը համարվել են չկայացած և 1 մրցույթի հարցազրույցի փուլը դեռ չի անցկացվել:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ 2021 թվականի մայիս ամսին նախարարության աշխատողների թիվը կրճատվել է 69 հաստիքային միավորով, որից 17-ն համալրված չէին (թափուր էին):

Այսինքն 15.07.2021թ. դրությամբ նախարարության հաստիքների թիվը կազմել է 390 հաստիքային միավոր, իսկ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների թիվը՝ 68-ը:

Մրցույթների անցկացման գործընթացը կրում է շարունակական բնույթ, մրցույթներով համալրվում են ինչպես առկա թափուր պաշտոնները, այնպես էլ ընթացքում առաջացող թափուրները: Ընդ որում, վերջիններիս համալրումը արդեն իսկ կազմակերպվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանումները վերաբերվում են առաջին կիսամյակի ընթացքում իրականացված

գործընթացներին, որի վերաբերյալ կարծիք կներկայացվի վեց ամիսների հաշվեքննության ընթացքում:

21.1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տնտեսվարողներին տրամադրված վարկերի դադարեցման վերաբերյալ

ՀՀ պետական բյուջեից Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշգրիտ պլանով նախատեսվել է հատկացնել 2,175,300.00 հազ. դրամ: 2020 թվականի երեք ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 631,160.55 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 631,160.55 հազ. դրամ:

Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով:

Հաշվեքննությամբ պարզվեց, որ դադարեցվել է թվով երեք տնտեսվարողի վարկավորման գործընթացը, հետևաբար կասեցվել է սուբսիդավորման գործընթացը Նախարարության կողմից: Պարզվել է, որ Ֆինանսական կառույցների կողմից վարկերի տրամադրման գործընթացի դադարեցման մասին տեղեկացվել են բանավոր կարգով և որևէ գրությամբ չի արձանագրվել:

Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված պայմանագրերով նախատեսված չէ վերոնշյալ դեպքերը կարգավորող դրույթ: Առկա է հսկողության գործընթացի թերացում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ֆինանսական կառույցների կողմից վարկերի տրամադրման գործընթացի դադարեցման մասին տեղեկացվել են բանավոր կարգով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված հսկողության գործընթացի թերացումն ընդունվել է:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկվում է Նախարարության և ՖԿ-ների միջև կնքված պայմանագրում կատարել լրացում՝ ՖԿ-ների կողմից տնտեսվարողի վարկավորման գործընթացը դադարեցնելու դեպքում, Նախարարությանը գրավոր տեղեկացնել:

Ծանոթություն

Հաշվեքննիչ պալատը 2021 թվականի հունիսի 4-ի թիվ ՀՊԵ-ԳՀ -134 և 2021 թվականի հունիսի 23-ի թիվ ՀՊԵ-ԳՀ -144 գրություններով Նախարարությունից պահանջել է տրամադրել տեղեկավարություն Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկային միջոցների ծախսումը հավաստող (Ծրագրով նախատեսված վարկերի տրամադրումից ի վեր) բանկային քաղվածքները էլեկտրոնային և թղթային եղանակով (բանկի կողմից հաստատված) վիճակագրական ընտրանքում ներառված գրությանը կից հավելվածում ներկայացված տնտեսվարող սուբյեկտների մասով: Սակայն առ 2021 թվականի հուլիսի 7-ը պահանջված տեղեկավարությունը չի տրամադրվել ՀՀ հաշվեքննիչ պալատին: Ուստի, պահանջված տեղեկավարության բացակայությամբ պայմանավորված հաշվեքննությունը չի իրականացվել ամբողջական: Հետևաբար, այս մասով ուսումնասիրությունը կշարունակվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:

22.1022-12001 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր շրջանակներում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ

Կրկնվող կետ

ՀՀ պետական բյուջեից Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 4,027,062.4 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (երեք ամիս) ճշտված պլանը կազմել է՝ 1,208,118.7 հազ. դրամ, որը ամբողջությամբ կատարվել է, այսինքն դրամարկղային ինչպես նաև փաստացի ծախսերը նույնպես կազմել են՝ 1,208,118.7 հազ. դրամ:

Ծրագիրն ուղղված է ագրոպարենային ոլորտի զարգացման ծրագրերի վարկավորմանը: Մասնակիցներն են գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (միասին՝ տնտեսվարողներ), առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները (այսուհետ՝ ՖԿ), Նախարարությունը, Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ): Ծրագրի շահառուների ընտրության չափանիշներն են՝ ՀՀ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներ ընտրված համաձայն՝ ՀՀ կառավարության 07.03.2019թ. թիվ 184-Լ որոշմամբ հաստատված Ծրագրի և ՖԿ-ների կողմից հաստատված համապատասխան չափանիշների:

Համաձայն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության 01.01.2021թ.-31.03.2021թ. ժամանակահատվածի համար տարեկան ճշտված պլանով նախատեսվել է սուբսիդավորել 7000 տնտեսվարողների՝ վարկառուների: Հաշվետու ժամանակաշրջանի (երեք ամիս) ճշտված պլանով այն կազմել է՝ 1050 վարկառու, իսկ փաստացի վարկառուների թիվը երեք ամսում կազմել է՝ 1073 տնտեսվարող: ԳՖԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն որոշ ֆինանսական կառույցների կողմից ներկայացված հաշվետվություններում եղել են որոշակի անճշտություններ, որի շտկման նպատակով ֆինանսական կառույցներից պահանջվել է լրացուցիչ տեղեկատվություն (հաշվետվություն)՝ արդեն կոնկրետ եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ և արդյունքում հայտնաբերվել են անճշտություններ: Ամփոփ հաշվետվության ճշտման արդյունքում սուբսիդավորվող տնտեսվարող սուբյեկտների՝ վարկառուների փաստացի թիվը կազմել է՝ 898 տնտեսվարող: Հաշվետու ժամանակահատվածի վարկառուների քանակի ճշտված պլանի և ճշտված փաստացիի տարբերությունը կազմել է՝ 152 վարկառու: Բյուջեյով սահմանված թվից պակաս վարկառուների թիվը պայմանավորված է հավաստագրման գործընթացում ձգձգումների առկայությամբ, ինչպես նաև 0 տոկոսադրույքով վարկերի տրամադրման որոշման ուշ ընդունմամբ (այն ընդունվել է՝ 11.02.2021թ. N 175-Լ որոշում):

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշման Ծրագրի մոնիթորինգն իրականացնում էր Նախարարության՝ գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից (այսուհետ՝ Վարչություն), վարկառու տնտեսվարող սուբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելով: 2020 թվականի հաշվեքննության արդյունքում պարզվել էր որ, վարկային միջոցների օգտագործման

նպատակայնության մոնիթորինգի իրականացման կարգի նախագիծը մշակված է, սակայն դեռևս չի հաստատվել և այն նախատեսվում է հաստատել 2021 թվականի 1-ին կիսամյակում:

3 ամիսների հաշվեքննության արդյունք

Մշակված և համապատասխան ընթացակարգերով անցած մոնիթորինգի իրականացման կարգի նախագիծը չի հաստատվել Նախարարության կողմից: Ավելին՝ համաձայն ՀՀ կառավարության 20.05.2021թ. թիվ 832-Լ որոշման՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի 17-րդ կետը ուժը կորցրած է ճանաչվել, որի արդյունքում վարկերի նպատակայնության մոնիթորինգն այլևս չի հանդիսանում Նախարարության գործառույթը:

23.1022-12001 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր շրջանակներում վարկառու տնտեսվարողներ սուբյեկտների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ

Կրկնվող կետ

ՀՀ պետական բյուջեից Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 4,027,062.4 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (երեք ամիս) ճշտված պլանը կազմել է՝ 1,208,118.7 հազ. դրամ, որը ամբողջությամբ կատարվել է, այսինքն դրամարկղային ինչպես նաև փաստացի ծախսերը նույնպես կազմել են՝ 1,208,118.7 հազ. դրամ:

2020 թվականի հաշվեքննության արդյունքում պարզվել էր որ, Վարչության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում վարկառուների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման հնարավոր դադարեցման հարցի ընթացքի վերաբերյալ ԳՖԿ-ի միջոցով ՖԿ-ներից ստացվել են վերջիններիս մեկնաբանությունները ներկայացված «ոչ նպատակային» և «հիմնականում ոչ նպատակային» դեպքերի վերաբերյալ: Ըստ Ծրագրի՝ վարկի ներդրման ուղղության մասնակի և ամբողջական փոփոխությունները չեն հանդիսանում Ծրագրի դրույթների խախտում, քանի որ վերջնարդյունքում տվյալ վարկերը ներդրվել են գյուղատնտեսության մեջ: Ոչ արժանահավատ դեպքերի վերաբերյալ ՖԿ-ների կողմից ներկայացված մեկնաբանությունները դիտարկելու արդյունքում որոշ

դեպքեր Վարչության կողմից համարվել էին նպատակային, սակայն թվով 8 վարկառուների ներդրումները շարունակում էին հանդիսանալ ոչ արժանահավատ դեպքեր՝ անկախ ՖԿ-ների ներկայացրած մեկնաբանություններից: Վերջին 8-ը ներկայացվել էր գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչությանը՝ համապատասխան որոշում կայացնելու:

2020 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների ընթացքում ներկայացված 695 վարկառուների շրջանում իրականացված մոնիթորինգի արդյունքներից գատ, 3-րդ եռամսյակի վարկ ստացածների շրջանակում իրականացվել էր 150 մոնիթորինգ: Արդյունքում արձանագրվել էր «հիմնականում նպատակային» և «նպատակային» ներդրումների շուրջ 130 դեպք, 17՝ «ոչ նպատակային», 2՝ «հիմնականում ոչ նպատակային», իսկ 1-ը՝ ընդհանրապես չէր օգտագործել վարկը:

2020 թվականի 4-րդ եռամսյակի վարկառուների մոնիթորինգն իրականացվել էր 2021 թվականի մարտ ամսին: Վերջինս գտնվում էր տվյալների ստուգման փուլում:

3 ամիսների հաշվեքննության արդյունք

Քանի որ Վարչության կողմից ոչ արժանահավատ համարվող բոլոր ութ դեպքերի վարկառուները «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի հաճախորդներ են, և ՖԿ-ն նպատակային էր համարում 8 դեպքերից 7-ը, ուստի Վարչության, ԳՖԿ-ի, գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչության և ՖԿ-ի ներկայացուցիչների համատեղ քննարկման արդյունքում, անարժանահավատ համարվող 8 դեպքերից ԳՖԿ-ին է ներկայացվել թվով 6 այն տնտեսվարողների ցանկը, որոնց վարկերը դիտարկվել են ոչ նպատակային օգտագործված: ԳՖԿ-ն ՖԿ-ին առաջարկել է դադարեցնել վերջիններիս վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը և մինչ այս պահը սուբսիդավորված գումարները համապատասխան ընթացակարգով հետ փոխանցել, իսկ երկու տնտեսվարողի ՖԿ-ն արդեն նախորոք հանել էր սուբսիդավորման ցանկից: Արդյունքում, այսօրվա դրությամբ Ծրագրի շրջանակում որոշվել է դադարեցնել թվով 8 տնտեսվարողի վարկերի սուբսիդավորումը, որի ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ըստ վարկառուների ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 10, հազ.դրամ

Հ/Հ	Վարկառու	Համայնք	Գումար	Մեկնաբանություն
1	Մ.Ա.	Վանաձոր	800.00	Վարկի սուբսիդավորումը արդեն դադարեցվել է

2	Պ.Ա.	Բագրատաշեն	1, 000.00	Նամակով տեղեկացվել է ՖԿ-ին սուբսիդավորման դադարեցման վերաբերյալ
3	Ե.Ժ.	Դարակերտ	10, 000.00	Վարկի սուբսիդավորումը արդեն դադարեցվել է
4	Հ.Հ.	Ներքին Բազմաբերդ	3, 000.00	Վարկի սուբսիդավորումը արդեն դադարեցվել է
5	Ա.Ա.	Գեղիովիտ	500.00	Նամակով տեղեկացվել է ՖԿ-ին սուբսիդավորման դադարեցման վերաբերյալ
6	Ղ. Տ.	Պառավաքար	3, 000.00	Վարկի սուբսիդավորումը արդեն դադարեցվել է
7	Հ. Գ.	Ալավերդի	280. 00	Նամակով տեղեկացվել է ՖԿ-ին սուբսիդավորման դադարեցման վերաբերյալ
8	«ԼԵԿԱՊԵ» ՍՊԸ		3,000.00	Նամակով տեղեկացվել է ՖԿ-ին սուբսիդավորման դադարեցման վերաբերյալ

Սուբսիդավորման վերջնական դադարեցման վերաբերյալ պաշտոնապես ԳՖԿ-ի կողմից դեռևս հաշվետվություն (տեղեկատվություն) չի ստացվել, ստացվելու դեպքում այն կներկայացվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:

2020 թվականի 4-րդ եռամսյակում, 3-րդ եռամսյակի վարկ ստացածների շրջանակում Վարչության կողմից իրականացված 150 տնտեսվարողների մոնիթորինգի արդյունքում արձանագրված «Ոչ նպատակային» և «հիմնականում ոչ նպատակային» դեպքերը եղել են վարկի ներդրման ուղղության մասնակի և/կամ ամբողջական փոփոխություններ, որոնք չեն հանդիսանում Ծրագրի դրույթների խախտում, քանի որ վերջնարդյունքում տվյալ վարկերը ներդրվել են գյուղատնտեսության մեջ, հետևաբար չեն հակասում Ծրագրին և չեն հանդիսանում ոչ արժանահավատ դեպքեր:

2020 թվականի 4-րդ եռամսյակի վարկառուների մոնիթորինգի տվյալների հավաքագրումն Վարչության կողմից իրականացվել է 2021 թվականի մարտի վերջին: Հավաքագրված տվյալների ստուգման գործընթացը դադարեցվել է՝ պայմանավորված Վարչության մարզային բաժինների աշխատակիցների կրճատմամբ:

2021 թվականի առաջին եռամսյակի սուբսիդավորման Ծրագրի վարկային պորտֆելից հաշվեքննողների կողմից վարկառուների մոնիթորինգի իրականացման համար կազմվել է վիճակագրական ընտրանք, որում ներառվել է ընդհանուր թվով 17 տնտեսվարողներ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի համայնքներից: Ընտրանքում ներկայացված տնտեսվարողներից աշխատանքային փաստաթղթի (հարցաթերթի) միջոցով ստացված հաստատումների վերլուծությունից ստացվել է, որ

ընտրված 17 վարկառուներից վարկը նպատակային են օգտագործել 9-ը, հիմնականում նպատակային 7-ը, իսկ 1 վարկառու վարկը ամբողջությամբ չի օգտագործել: Արդյունքում՝ վարկերը ներդրվել են գյուղատնտեսության մեջ, չեն հակասում Ծրագրին և չեն հանդիսանում ոչ արժանահավատ դեպքեր:

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առաջարկվում է՝

Nº	Առաջարկություն ³	Ընդունելի է/ Ընդունելի չէ ⁴	Կատարված է/ Ընթացքում է ⁵	Հիմնավորումներ ⁶
1	1116՝ Ծրագրի 11001՝ Միջոցառումն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել անասնաբույժներին համապատասխան սառնարաններով ապահովելու՝ պատվաստանյութերը պատշաճ կերպով և վայրում պահպանելու համար:			
2	Արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից կազմված հաշվետվությունները ներկայացնել նույն ժամանակահատվածի կտրվածքով:			
3	Առաջարկվում է Նախարարության և ՖԿ-ների միջև կնքված պայմանագրում կատարել լրացում՝ ՖԿ-ների կողմից տնտեսվարողի վարկավորման գործընթացը դադարեցնելու դեպքում, Նախարարությանը գրավոր տեղեկացնել:			

ԳԾԿ-ին առաջարկվում է՝

³ Ներկայացնել առաջարկության բովանդակությունը /լրացվում է հաշվեքննողների կողմից/:

⁴ Ընտրել երկու տարբերակներից մեկը՝ համապատասխանաբար, առաջարկությունն ընդունելի կամ ոչ ընդունելի լինելու դեպքում /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

⁵ Լրացվում է միայն ընդունելի առաջարկությունների դեպքում՝ ընտրելով երկու տարբերակներից մեկը՝ համապատասխանաբար, ամբողջությամբ կատարված լինելու և դեռևս կատարման ընթացքում լինելու դեպքում /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

⁶ Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները, պարզաբանումներ չընդունման և չկատարման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ Հաշեքննիչ պալատի ներկայացրած առաջարկությունների կատարման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

№	Առաջարկություն ⁷	Ընդունելի է/ Ընդունելի չէ ⁸	Կատարված է/ Ընթացքում է ⁹	Հիմնավորումներ ¹⁰
1	1116՝ Ծրագրի 11001՝ Միջոցառումն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է միջոցներ ծեռնարկել անասնաբույժներին համապատասխան սառնարաններով ապահովելու՝ պատվաստանյութերը պատշաճ կերպով և վայրում պահպանելու համար:			

⁷ Ներկայացնել առաջարկության բովանդակությունը /լրացվում է հաշվեքննողների կողմից/:

⁸ Ընտրել երկու տարբերակներից մեկը՝ համապատասխանաբար, առաջարկությունն ընդունելի կամ ոչ ընդունելի լինելու դեպքում /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

⁹ Լրացվում է միայն ընդունելի առաջարկությունների դեպքում՝ ընտրելով երկու տարբերակներից մեկը՝ համապատասխանաբար, ամբողջությամբ կատարված լինելու և դեռևս կատարման ընթացքում լինելու դեպքում /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

¹⁰ Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները, պարզաբանումներ չընդունման և չկատարման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ Հաշեքննիչ պալատի ներկայացրած առաջարկությունների կատարման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում և ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

VI. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Nº	Անհամապատասխանություն/ խեղաթյուրում ¹¹	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է ¹²	Հիմնավորումներ ¹³	Ծանոթություն
1.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ Անասնաբույժների և համաճարակաբանների հետ պայմանագրերը կնքվել են առանց մրցույթի կազմակերպման՝ շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև ԳԾԿ-ի գնումների պլանում ներառված չէ տվյալ ծառայությունների ձեռքբերումը: Տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և համայնքները սպասարկող անասնաբույժների հետ առանց մրցույթի պայմանագրի կնքման հետևանքով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է. «Գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում»:			Կրկնվող կետ 1
2.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում համաճարակաբանների կողմից			

¹¹ Ներկայացնել անհամապատասխանության/խեղաթյուրման հակիրճ էությունը /լրացվում է հաշվեքննողների կողմից/:

¹² Ընտրել երեք տարբերակներից մեկը /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

¹³ Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները վերացման ուղղությամբ, պարզաբանումներ չվերացման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ վերացման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում է ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

	ներկայացված ամփոփ հաշվարկի ակտերի վերաբերյալ Փետրվար ամսին համայնքները սպասարկող անասնաբույժների կողմից իրականացվել են կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ, սակայն կատարված միջոցառումների վերաբերյալ համաճարակաբաններին հաշվետվություն չի ներկայացվել: Անասնաբույժների կողմից մարտ ամսին կազմված ակտերում ներառվել են նաև փետրվար ամսվա ընթացքում իրականացված միջոցառումները, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է համաճարակաբանին: Այնուհետև, համաճարակաբանների կողմից կազմված 2021 թվականի մարտ ամսվա ամփոփ հաշվարկի ակտերը ներկայացվել են ԳԾԿ:			
3.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում պատվաստանյութերի պահպանման համար նախատեսված պայմանների վերաբերյալ Չորս տարածաշրջաններում իրականացված ռիսկային ստորախմբերի արդյունքում պարզվել է, որ ԳԾԿ-ի կողմից թվով 45 անասնաբույժներին տրամադրված 44 սառնարաններից ընդամենը 5 անասնաբույժների մոտ է առկա աշխատող սառնարան, մյուս անասնաբույժները պատվաստանյութերը պահպանում են անձնական սառնարաններում՝ սննդի հետ:			Կրկնվող կետ 3
4.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ծախսված պատվաստանյութերի վերաբերյալ ԳԾԿ-ի կողմից ստացված պատվաստանյութերը համաճարակաբանները անասնաբույժներին են բաշխել ստացումից			

	երեք օր անց՝ մինչև 2021 թվականի փետրվարի 18-ը, որը համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերի 1.2.6 կետի համաձայն պետք է գրանցվեր անասնաբուժական դեղամիջոցների և միջոցների ստացման, ծախսման և մնացորդների վերաբերյալ գրանցամատյանում: Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 1.2.6 կետով սահմանված դրույթների մասով, քանի որ նշված տարածաշրջանների համաճարակաբանները հիմնականում չունենին գրանցամատյաններ:			
5.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11003 միջոցառման շրջանակներում ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ 2021 թվականի առաջին եռամսյակի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցեյրոգի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայացված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 36,505 հատ, որը գումարային արտահայտությամբ կազմում է 11,761.54 հազ.դրամ: Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև: Հաշվետվությունների միջև առկա անհամապատասխանությունը հանգեցրել է 11,761.54 հազ.դրամ գումարի չափով խեղաթյուրման:			
6.	1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների			

	/գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների և արտոնյալ ժամկետների վերաբերյալ Վարկի մայր գումարի վճարման համար արտոնյալ ժամկետը պետք է սահմանվի վարկը տրամադրելու պահից հաշվարկելով առնվազն 2 ամիս, բայց ոչ ավելին քան 3 ամիս: Սակայն արտոնյալ ժամկետ է սահմանվել 6 ամիս: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 24-րդ կետի պահանջների և 16.11.2020թ. վարկառուի ու բանկի կնքված պայմանագրի միջև:			
7,	1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում վարկառուի և ֆերմերների միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ Կնքված պայմանագրերի դրույթները չեն համապատասխանում ՀՀ կառավարության որոշմամբ դրույթների: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ մասի պահանջների և կողմերի /վարկառուի ու ֆերմերների / կնքված պայմանագրերի միջև:	Ընթացքում է		
8.	1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում Վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության վերաբերյալ / ձև N 1/ Կառավարության որոշմամբ սահմանված N 1 ձևերը շահառուի			

	կողմից կազմված են թերություններով, մասնավորապես՝ նշված չեն մշակվող հողատարածքը, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 28-րդ կետի պահանջների միջև:			
9.	1224-12001՝Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի համաձայն՝ միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականացվել մոնիթորինգ: Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով:			
10.	1224-12001՝Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում Նախարարության և ՖԿ-ների միջև կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման վերաբերյալ Պայմանագրի 8.2 կետով սահմանվում է, որ Ֆինանսավորողը պարտավոր է ՖԿ-ի կողմից ներկայացված Հայտի ներկայացման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում ՖԿ-ին փոխանցել սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարը, եթե Հայտը բավարարում է պահանջներին: Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 8.2 կետով			

	սահմանված պահանջների մասով:			
11.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի կողմի անասնաբուժական վճարովի ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ Ծրագրի շրջանակներում ԳԾԿ-ի կողմից անասնահամաճարակային ծառայությունների ձեռքբերումը իրականացվել է առանց մրցույթի, շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, հետևաբար նշված անհամապատասխանությունների առկայությունը հանգեցրել է խեղաթյուրման համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրային գումարների մասով՝ համաճարակաբանների հետ՝ ամսական 200.00 հազ. դրամի չափով, /առաջին եռամսյակի ընթացքում ԳԾԿ-ի կողմից համաճարակաբաններին հաշվարկվել է 16,995.13 հազ. դրամ աշխատավարձ/ և անասնաբույժների հետ տարեկան կտրվածքով՝ 864,328.44 հազ. դրամի չափով:			
12.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում անասնաբույժների կողմից լրացված գրանցամատյանների վարման վերաբերյալ Անասնաբույժների գրանցամատյաններում, որոշ դեպքերում, տվյալ սյունակում միջոցառումների կատարումն հավաստող անասնատիրոջ ստորագրության փոխարեն, ըստ՝ անասնաբույժի մեկնաբանության, ստորագրել են անասնաբույժները, տան անդամներից որևէ մեկը, կամ անասնաբույժին օգնող բանվորը: Առկա է անհամապատասխանություն անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի 3.3.8 կետով սահմանված պահանջների մասով: Հաշվի առնելով նշված հսկողության գործընթացի			

	համատարած բացակայությունը, այն է անասնատիրոջ ստորագրության բացակայությունը, նշվածը հանգեցնում է անասնաբուժական ծառայությունների խեղաթյուրմանը՝ նշված անասնաբույժներին վճարված աշխատավարձի ամբողջ չափով, այն է 113,460.84 հազ.դրամ:			
13.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Գավառի տարածաշրջանի անասնաբույժների գրանցամատյանների և ամփոփ-հաշվարկի ակտերի համեմատության վերաբերյալ Անասնաբույժների կողմից վարվող անասնահակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանում գրանցված միջոցառումների քանակները համեմատվել են անասնաբույժների կողմից կազմված ակտով արձանագրված միջոցառումների, անասնագլխաքանակի և ծախսված պատվաստանյութերի քանակների հետ: Հայտնաբերվել են համատարած շեղումներ գրանցամատյանում ներկայացված տվյալների, անասնաբույժների կողմից կազմված ակտերի և փաստացի հաշվարկված պատվաստանյութի քանակների հետ, ինչը հանգեցնում է անասնաբույժների կողմից ծախսված պատվաստանյութերի ամբողջ գումարի, ինչպես նաև անասնաբույժներին վճարված աշխատավարձի ծախսի խեղաթյուրման հետ, որը կազմում է 2021 թվականի 1-ին եռամսյակում համապատասխանաբար կազմում է 73,284.58 հազ.դրամ և 113,460.84 հազ.դրամ:			
14.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում անասնաբույժների			

	գրանցամատյանների բնօրինակների և ԳԾԿ ներկայացված գրանցամատյանների լուսապատճենների տվյալների համեմատության վերաբերյալ Գրանցամատյանների ուսապատճենների և բնօրինակների համեմատությամբ հայտնաբերվել են համատարած շեղումներ, ինչը հանգեցնում է անասնաբույժների կողմից ծախսված պատվաստանյութերի ամբողջ գումարի, ինչպես նաև անասնաբույժներին վճարված աշխատավարձի ծախսի խեղաթյուրման, որը կազմում է 2021 թվականի 1-ին եռամսյակում համապատասխանաբար 73,284.58 հազ.դրամ և 113,460.84 հազ.դրամ:			
15.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11003 միջոցառման շրջանակներում ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ 2021 թվականի առաջին եռամսյակի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցեյյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայացված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 36,505 հատ, որը գումարային արտահայտությամբ կազմում է 11,761.54 հազ.դրամ: Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կապարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.03.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև: Հաշվետվությունների միջև առկա անհամապատասխանությունը հանգեցրել է 11,761.54 հազ.դրամ գումարի չափով խեղաթյուրման:			Կրկնվող կետ 15

16.	1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ձև 1-ի տեղեկատվությամբ, ընկերությունը կաթի մթերման պայմանագրեր է կնքել 17 ֆերմերների հետ, սակայն հաշվեքննությանը ներկայացվել է թվով 16 պայմանագիր: Պայմանագրերից 2-ը կնքվել են 01.01.2021թ., սակայն դրանց վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը հանդիսացել է ավելի վաղ՝ 16.11.2020թ. վարկի տրամադրման հիմք: Առկա է խեղաթյուրում վարկառուի կողմից վարկի ստացման համար ֆինանսական կազմակերպությանը ներկայացված ֆերմերների հետ կնքված պայմանագրերի ցանկի և կնքված պայմանագրերով փաստացի մթերված քանակների միջև՝ 2,154.00 գումարի չափով:			Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում
17.	1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ / ձև N 1/ Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը Ծրագրին մասնակցող ֆերմերներին պատկանող փաստացի անասնազխաքանակների հետ: Պարզվել է որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են տարբերություններ, որոնք հիմք են հանդիսացել խեղաթյուրման՝ 52,134.00 հազ. դրամ գումարի չափով: Տարբերություն գումարը հաշվարկվել է ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության և համայնքի ղեկավարի ու ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի անասնազխաքանակի տարբերություն ունեցող պայմանագրերի մասով:			

18.	1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ 2021թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել են 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Ինչը հակասում է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հարվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի պահանջներին:			
19.	Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում պլանային ցուցանիշների վերաբերյալ ԳԾԿ-ի և համաճարակաբանների միջև պայմանագրերը կնքվել են սկսած 2021 թվականի հունվար ամսից, իսկ անասնաբույժների հետ՝ 2021 թվականի փետրվար ամսից: Անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի Հավելված 2-ով սահմանվել է յուրաքանչյուր անասնաբույժի համար տարեկան կտրվածքով նախատեսված հետազոտությունների և պատվաստումների պայմանական գլխաքանակը և մեկ պայմանական գլխի համար նախատեսված միավորի արժեքը: Սակայն իրականացվելիք հետազոտությունների և			

	պատվաստումների քանակը ըստ եռամսյակների տարանջատված չէ: Ստորև Աղյուսակ 9- ով ներկայացվում է 2021 թվականին անասնաբույժների հետ կնքված պայմանագրերով նախատեսված հետազոտությունների և պատվաստումների քանակը, ինչպես նաև նրանց կողմից մարտ ամսին կատարված միջոցառումների քանակը:			
20.	1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տնտեսվարողներին տրամադրված վարկերի դադարեցման վերաբերյալ Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով: Հաշվեքննությամբ պարզվեց, որ դադարեցվել է թվով երեք տնտեսվարողի վարկավորման գործընթացը, հետևաբար կասեցվել է սուբսիդավորման գործընթացը Նախարարության կողմից: Պարզվել է, որ Ֆինանսական կառույցների կողմից վարկերի տրամադրման գործընթացի դադարեցման մասին տեղեկացվել են բանավոր կարգով և որևէ գրությամբ չի արձանագրվել: Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված պայմանագրերով նախատեսված չէ վերոնշյալ դեպքերը կարգավորող դրույթ: Առկա է հսկողության գործընթացի թերացում:			